




ԹՈՒՐԱՆ

1975
U.



ՀՅ
ՏԱՐ


Եղիսօն



ՊԱՇՏՈՆԱԿԱ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱ
ԱԹՈՂՈՎ
Ա. ԵՂԻԿԾՈՒ

Յունաք

1975



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ժամանակի և կյանքի մեծ խորհուրդը	7
Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Շայրագոյն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և քոյլ Եկեղեցիների բոգևոր պետերի ու կրոնական այլ հա- մայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված ող- ջույնի նեռագրերն ու գրությունները	11
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ողդված Հայաստանյաց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմակա բոլոր առաջնորդներին և Եկեղեցական համայնքներին	14
Ամանորա և սուրբ Ծննդյան տոնակատարությունները Մայր Աթոռում	16
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ	19
Մատունագիտություն (Գևորգ Զ և Վազգեն Ա. կաթողիկոսների)	22
ԵԶՆԻԿ ԱԲԵԼԱ. ՊԵՏՐՈՍՅԱՆ—Մովսէսի հայոց վարդապետի գրեալ պատասխանիք բոլոյն Տրապիզոնի առ հատուածնեալն Գրիգոր Երեց	30
Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ—Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախօրինակը	41
ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ—Մաշտոցան մրցանակի նոր դափնեկիրը	52
Սուրեն Ավշարյանի ծննդյան 70-ամյակը	59
Ցուցակ Մայր Աթոռ ու Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	61
Համգիստ տ. Եղիշե քահանա Վարդանյանի .	64

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՆ

Արմանական ԽՍՀ, Եղմիածն, Ռեդակցիա ժուռալ «Էջմիածն».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS


Հանձնված է արտադրության 31/I 1975 թ.: Ստորագրված է տպագրության 25/II 1975 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 80×84 $\frac{1}{2}$, պատվեր 66ա

Մայր Աթոռ ու Էջմիածնի տպարան, 1975 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՐ ԵՒ ՍՐԱՎՃՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՈՒԼ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

(1975 թ. հունվարի 6)

«Տէր, ուղեա զգնացս մեր ի ճանապարհն խաղաղութեան»:

Տիրոջ ողորմությամբ նոր տարվա սեմին կանգնած, մեր հուսացյալ հոգիները մի անգամ և լուս են սուրբ Ծննդյան պատգամը՝ «Են յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Այս պատգամով է որ ծնավ և հայտնեցավ Փրկչը մեր Քրիստոս, այս պատգամով նա լուս ու ջերմություն բաշխեց իր աշակերտների հոգիներին, և նոյն այս պատգամը որպես կտակ թողեց համայն մարդկությանը, առ Հայր բարձրանալուց առաջ:

Ահա թէ ինչու, մեր ամենանվիրական աղոթքներից մեկն է հանդիսանում, առ Քրիստոս ուղյալ աղերսանքը մեր՝ «Տէր, ուղեա զգնացս մեր ի ճանապարհն խաղաղութեան»:

Մարդու երկրային կյանքը երկար մի ճանապարհություն է ժամանակի տարածքի մեջ, բաժանված հանգրվանների, որ մենք կոչում ենք տարիներ: Եվ երբ մեր կյանքի ճանապարհի վրա բացվում է մի նոր ժամանակաշրջան, այսինքն մի նոր տարի, ի՞նչ կա ավելի բնական, ավելի բարի ու աստվածահանո, քան ըդալ և կամենալ, որ մեր առաջ բացվող կյանքի ճանապարհի վրա՝ ապրենք խաղաղ, գործենք խաղաղությամբ, լինենք խաղաղարար մարդիկ մեր նմանների նկատմամբ:

Թեև հույժ կենսական ու հրամայական է թվում իրագործումը մարդկային այս տեսչանքի, սակայն պատմության փորձը և մեր խսկ ապրած օրերի իրադրությունները զալիս են ասկու՝ թէ, ավաղ, ազգություններն ու պետությունները, հակառակ իրենց բարի կամեցողությանց և երբեմն նոյնիսկ հակառակ իրենց շահերի, տակավին հեռու են իրար միջն տևապես արդար ու խաղաղ հարաբերություններ հաստատելուց:

Սանուամնեայնիվ, ուղիղ չէ հոռեստեաորթան անձնատոր լինել: Նախ, որովհետև ապավինում ենք աստվածային ողորմությանը, երկրորդ, որովհետև հավատում ենք մարդու բարվու հանճարի հաղթամակին, և երրորդ՝ որովհետև հաստատում ենք՝ թե միջազգային կանքում հետզինետե առավել ամրապնդում են խաղաղության շանելերն ու իրավունքի ուժը:

Աշխարհի բոլոր ժողովությունների, հայողոյ թե պարտվող ժողովուրդների, անցյալի դառն փորձությունները, պետությունների փոխադարձ շահերի իրապաշտ ըմբռնումը, ժողովրդական լայն զանգվածների գիտակցության մեջ հետզինետե բարեկացող համամարդկային հառաջիմական զաղափարները, գիտության և տեխնիկայի աներևակայելի նվաճումները, մենք նկատում ենք իրական ու գորավոր նախադրյալներ, ի խնդիր ազգամիջյան թշնամությանց տակավ վերացման և համաշխարհային խաղաղ գոյակցության ամրապնդման:

Հակառակ հակասական դրսերումների, այս, մարդկությունը գնում է դեպի հավաքական գործակցություն, դեպի համերաշխություն, դեպի խաղաղություն, դեպի մարդկայնացում:

Այն օրից մանավանդ, երբ երկրագնդի առաջին մարդը տիեզերք բարձրացավ, երկիրը դարձավ առավել միասնական մի աշխարհ, ամեն ազգի մարդիկ դարձան բնակիչները մի երկիր, բոլոր ժողովուրդները՝ անդամները մի մարդկային ընտանիքի, վեր ամեն տեսակի բնական, ընկերային կամ քաղաքական տարրերություններից:

Ազգամիջյան թշնամություններից ազատագրվելու և մարդկային աշխարհում խաղաղ ու արդար հարաբերություններ ստեղծելու ճանապարհի վրա, մեր օրերում իրենց հույց կարևոր նպատակ են բերում նաև բոլոր կրոնական հաստատություններն ու կազմակերպությունները, որոնց թվում քրիստոնեական եկեղեցիները, բոլորին ծանոթ էկումնիկ շարժման շնորհիվ: Ծշմարիտ է, որ էկումնիկ շարժումի առաջնահերթ նպատակն է նկատվում՝ քրիստոնեական եկեղեցիների միությունը իրականացնել մի ընդհանուր համարքիստոնեական եղբայրության մեջ, սակայն ոչ նվազ առաջնահերթ պիտոր է նկատել նոյն էկումնիկ շարժման առաքելությունը՝ ի խնդիր արդար ու խաղաղ գոյակցության հրամայականի կենսագործման մարդկության ծոցի մեջ: Թեև եկեղեցյաց միության գաղափարն էլ, վերջին հաշվով, միննոյն նպատակին է ծառայում, քանի որ այդ ճանապարհով, քրիստոնեության մտածողությունը ձգտում է համայն մարդկությունը ըմբռնել որպես Աստուծո ժողովուրդ, այսինքն համերաշխված, եղբայրացած մարդկանց ու ազգությունների մի համամարդկային ընտանիք, որ դավանում է զԱստված որպես Ճայր, Փրկիչ և Մխիթարիչ:

Հետևաբար նաև մենք՝ հայերս, իբրև քրիստոնյաներ ու իբրև եկեղեցի որ մասնակցում ենք համաշխարհային էկումնիկ շարժմանը, աղոթենք այսոր՝

«Տէր, ուղեան զգնաց մեր ի ճանապարհ խաղաղութեան»:

Երբեմն Մեզ ասողներ են լինում, թե հաճախ ենք խոսում խաղաղության մասին, հաճախ ենք պաշտպան կանգնում ժողովուրդների բարեկամության դատին:

Ծշմարիտ է այդ. սակայն չե՞ք կարծում, սիրելի հավատացյալներ, որ մանավանդ մեր պարագային, շատ բնական է այդ և միշտ այժմեական, քանի որ Հայրապետն ենք մի եկեղեցու և ազգի, որի նման այս աշխարհում քիչ ժողովուրդներ գրեթե տևապես ուրի կոխան են դարձել ու անխնա կոտոր-

վել այլազգի պատերազմողների սրով ու հրով դարեր շարունակ, մինչև իսկ մեր դարի սկզբին, երբ 1915 թվականին, Արևմտյան Հայաստանի ամբողջ հայ ազգաբնակչությունը տեղահան արվեց ու կոտորվեց օսմանյան կառավարության ծրագրով ու կազմակերպությամբ:

Այդ սև օրերից անցել են արդեն վաթուն տարիներ: Մեր ազգային ողբերգությունը վաղուց վերջ է գտել: Մեր ժողովուրդն այլև գոհի վիճակում չի գտնվում այսօր, ոչ էլ անտեր է ու անհայրենիք:

Մեր օրերին նա իր վերածնունդի ժամանակաշրջանն է ապրում: Նա աշխատում է, նա կառուցում է ու ստեղծագործում է: Նա լավատես ու ինքնավատահ և ազնիվ երազանքներով լեցուն հայացքը դեպի գալիքին է սևեռած:

Բայց տարին մեկ անգամ, ամեն ապրիլի 24-ին, հայ ժողովուրդը մի պահ կանգ է առնում և հարգանքով խոնարհվում իր նահատակների հիշատակի առաջ: Դա մարդկային է, դա քրիստոնեական է, դա բարոյական է: Այդ է թեկադրում նաև մեր օրերի խաղաղամիտության և ժողովուրդների բարեկամության գիտակցությունը: Եվ կարծում ենք ու սպասում, որ ոչ միայն մենք՝ հայերս, այլև բոլոր ժողովուրդները, բոլոր ազնիվ մարդիկ իրենց աղոթքներով միանան մեզ և մեր արդար դատին, որպեսզի հետ այսու այլևս երեք և ոչ մի տեղ աշխարհում, չկրկնվեն Տեր-Էլ-Զորներ և Առաջվիցներ, Ռասուլայներ և Մայստաներներ:

Հանուն մարդկայնության ու արդարության, հանուն ժողովուրդների համերաշխության և խաղաղ գոյակցության, երբեք չակաք է մոռացվեն անցյալի արհավիրքներն ու չարիքները, նահատակություններն ու ցեղասպանությունները: Ամեն հայ հավատացյալի, ամեն հայ մարդու հոգում մշտավառ է մնալու մի ճրագ ի հիշատակ Ապրիլյան եղեռնի գոհերի: Այդ սուրբ հիշատակը երբեք չի թառամելու: Ապրիլյան նահատակները կմոռացվեն այն ժամանակ միայն, երբ հայ ժողովուրդը դադարի նրանց հիշատակը ոգեկոչելուց, երբ դադարի նրանց ազգային տենչանքները իր սրտում վառ պահելուց, ու մահավանի երբ դադարի անսակարկ կերպով նվիրվելուց՝ իր վերածնված մայր երկրի վերաշինությանը, անվտանգությանն ու խաղաղության գործին:

Մեր ժողովուրդը դարեր շարունակ հավաճակ ու գոհվեց, որովհետև նա տեսաց սեփական մի հայրենիք ունենալ իր պապերի հողի վրա ու այնտեղ ապրել ապահով ու ստեղծագործել ազատ: Սարդարապատով ու Նոյեմբերյան լուսաբացով, նա հաջողեց՝ պատմական Հայաստանի արևելյան հողամասում գոնե, իրականացնել իր նահատակների ազգային երազանքը, իբրև պակավորումը բազում սերունդների աղոթքների, զոհաբերությների ու ազատագրական պայքարների:

Ահա թէ ինչու մեր եկեղեցին ու հայությունը համայն, ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, կանգնած Ապրիլյան եղեռնի վաթունամյակի սեմին, երկյուղածությամբ պիտի ոգեկոնեն այս տարի հիշատակը մոտ երկու միլիոն իրենց զոհված զավակների, ու ապա միհթարված սրտով վառք պիտի տան նախախնամությանը՝ որ ամրակուր ու ապահով հիմքերի վրա հաստատված իրենց արդի մայր հայրենիքը՝ ամենափառավոր կորողն է նահատակների հիշատակը հավերժացնող և ամենազորավոր գրավականը ազգային գոյատելման, այլ և ամենաուղիղ ճանապարհը մեր ժողովուրդի բոլոր արդար երազանքների կենսագործման՝ գալիք ժամանակներին:


Հարգանք մեր բյուրավոր նահատակներին, փառք մեր ազգային վերածնունդին, լուս, ավելի՝ լուս հավերժական Մայր Հայաստանին:

Մեծ եղեռնի վաթսունամլակին, մայր երկրում թե սիյուռքում, այս թող լինի մաղթանքն ու կարգախոսը մեր եկեղեցու և ժողովրդի բոլոր զավակների: Նրանք բոլորը, բոլորն անխսիր, թող մեկտեղվեն այս տարի, թող միանան և համերաշխվեն նահատակների հիշատակի ոգեկոչումով, հայրենի վերածունդի ուրախությամբ ու էլ ավելի պայծառ ապագայի տեսիքով:

«Տեր, ուղղեա զգնաց մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Սիրելի հավատացլալ ժողովորդ, շնորհավորում ենք ձեր նոր տարին և սուրբ Ծննդոց, և միածնակշ Մայր տաճարից բաշխում ենք բոլորին Մեր ամենաքարի մաղթանքներն ու օրհնությունները:

«Քրիստո ծնաւ և յայտնեցաւ», խաղաղություն ընտ ձեզ, այժմ և հավիտյան. ամեն:





ԺԱՅԱՋՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԿՑԱՆՔԻ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Դարձալ նոր տարի է և սուրբ Ծննդան:

Իբրև եկեղեցի և ժողովորդ մի անգամ ևս
կանգնել ենք ժամանակի և կյանքի խոր-
հորդների առաջ:

Այս սրբազն օրերին հավատավոր
մարդկությունը անցած տարին ճանապար-
հում է ո՞չ դատնությամբ և ո՞չ էլ ափսոսան-
քով և անկուրում լավատեսությամբ՝ ու
պայծառ համատով ողջունում է Ամանորը՝
լուսաբացը նոր երազանքների, նոր հոյսե-
րի, նոր ապրումների և աշխատանքային
նորանոր սխրագործությունների:

Գեղեցիկ է և իմաստալից նոր տարեսու-
տը իր խոհերով, իր խորհուրդով և լիա-
նուա իր սեղաններով:

Ամեն տարեսուտ տո՞ւն է ժամանակի,
իսկ սուրբ Ծննդը՝ կյանքի՝ Ժամանակից
և կյանքից դուրս չկա մարդկային գոյու-
թյուն և պատմություն:

Հավերժի, պատմության գիրկն անցավ
1974 թվականը ողջ աշխարհի, մեր եկեղեցու
ու հայրենիքի ու բովանդակ հայ ժողովուրդի համար իրադարձություններով հա-
րուստ ևս մի տարի:

Սպանական սովորությ է երկու ժամա-
նակների՝ անցյալի և գալիքի, երկու հավի-
տենությունների ճամփարաժանան սահ-
մանագլխին կանգնած հաշվեհարդարի են-
թարկել կյանքի ապրված օրերը որպես
պատմություն և բացել նոր ժամանակների
և գալիք կյանքի նոր ու սպիտակ մատյանը
հույսերով ու երազանքներով:

Ժամանակի գաղափարը մարդու մեծա-
գույն հայտնագործություններից մեկն է՝

իմանված նրա կյանքի փորձառության վրա:
Մարդն է տե՛րը ժամանակի:

Ստեղծվել ենք Աստուծո պատկերով և
նմանությամբ. «Նման նմա լինեց եմք»
(Ա. Հովհ. Գ 2): Ծնվում ենք որպես Աստու-
ծո որդիներ, բայց լինում ենք նրա ժա-
ռանգներ (Գաղտ. Դ 7) մե՛ր կամքով և մե՛ր
գործերով:

Քրիստոնեական մտածողության համար
երեք էլ պատահականություն չեն Ամանորի
և սուրբ Ծննդյան տոների այս հաջորդա-
կանությունը, ժամանակի և կյանքի խոր-
հորդների այս ներքին ալերուը:

Ծննդը համայն մարդկության երջան-
կության, եղայրության համընդհանուր
ներդաշնակությունն է, կյանքի հայթական
գնացքը, հավերժական ու անփոփոխ ժա-
մանակի ապրված մի ակնթարթը՝ Ավետա-
րանի պատգամների լույսի ներքո:

Ամանորը և սուրբ Ծննդը մարդկությա-
նը ուղյալ սրբազն մի կոշ է հոգնոր, բա-
րոյական վերածննդյան, «առավել կյանքով»
ապրելու համար:

Նորոգված, պայծառակերպված կյանքով
ապրելու և աշխատելու զգացումի և գիտակ-
ցության մեջ մարդու համար ժամանակը
նորանում է, թարմանում, իսկ մարդն իր
հոգական, զգացական և իմացական աշ-
խարհով առնականանում, գեղեցկանում և
բյուրեղանում է:

Լուս գալիքի նկատմամբ հույսերի, երա-
զանքների, հավատի մեջ աշխարհն է՛լ ավե-
լի է գեղեցկանում, և զգացվում է կյան-
քի վեհությունը, նպատակալացությունը,

կյանքի բանաստեղծությունը և հավերժիք բերկրանքը:

Հավաստու ենք, որ կգա լուսի և մտքի համընդհանուր թագավորությունը, եղբարությունը տիեզերական: Ավետարանի լուսը միայն կարող է լուսավորել մարդկանց սրտերը, ազնվացնել և խաղաղեցնել մարդկանց հոգիները:

«Մարդու երկրային կյանքը մի ճանապարհորդություն է ժամանակի տարածքի մեջ,—ասում է Վեհափառ Հայրապետը սուրբ Ծննդյան այս տարվա նր գեղեցկահյուս քարոզի մեջ,—բաժանված հանգըրփաների, որ մենք կոչում ենք տարիներ: Եվ երբ մեր կյանքի ճանապարհի վրա բացվում է մի նոր ժամանակաշրջան, այսինքն մի նոր տարի, ի՞նչ կա ավելի բնական, ավելի բարի և աստվածահանո, քան ըղձալ և կամնալ, որ մեր առաջ բացվող կյանքի ճանապարհի վրա ապրենք խաղաղ, գործենք խաղաղությամբ, ինենք խաղաղարար մարդիկ մեր նմաների նկատմամբ»:

Ահա թե ինչո՞ւ բիհոսունեական մտածողությունը նոր տարվա և ս. Ծննդյան «Անծ և սրանչելի խորհուրդ»-ի շորջ է կենտրոնացնում մարդկանց մտածումները՝ նրանց սուած բանալով աստվածային խոսքի հրաշքը, որ «քննակեաց ի մեզ» (Հովհ. Ա. 14), շեշտելով նաև ժամանակի արժեքը, «գինը» (Գաղտ. Զ. 10) մարդու կյանքի մեջ, կյանք, որը պետք է լցվի Աերշնչումի սակավաթիվ և Բազմագյուտ պահերին ստեղծված անանց արժեքներով, աստվածահանո, մարդափրական, հայրենանկեր աշխատանքներով և «զրոց արժանի արութեան գործերով»:

Աշխատանքով վեհանում է մարդը, հարստանում և գեղեցկանում է նաև կյանքը:

Հայ ժողովորդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սիյուռի տարածքի վրա գիտակից և լուրջ պատասխանատվության զգացմունքներով, սրտառու լավատեսությամբ և հավատով բացում է ահա և՛ նոր ժամանակների, և՛ նոր կյանքի մատյանը:

1974 թվականը մեր եկեղեցու, Մայր Աթոռ և Էջմիածնի, մեր վերածնված Հայոց աշխարհի և հայ ժողովորդի համար եղակ աշխատանքով և ստեղծագործություններով հարստա պատմական տարի:

1974 թվականը եկեղեցական-ազգային տեսակետից հանդիսացած հիշատակության արժանի տարի նորանով, որ Հայաստանյաց սրաքական եկեղեցին, Մայր Աթոռ և Էջմիածնի օրինությամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի արթուն և անմիջական դեկապարության ներքո, շարունակեց իր նախախնամական հոգեոր ու պատմական առաքելությունը հայ ժողովորդի կյանքում թե՛ ի հայրենիս և թե՛ ի սիյուռու:

աշխարհի: Մայր Աթոռով լայն հորիզոնների մտասկեռուսով շարունակեց իր հիմնական եկեղեցանվեր-հայրենասիրական առաքելությունը մեր ժողովորդի ծոցում, իր գերագույն հրավունքների կորում պաշտպանությամբ ու մեր ժողովորդի ազգային գերագույն շահերի բոլորանվեր գիտակցությամբ: Այս ոգով է Մայր Աթոռով և Վեհափառ Հայրապետով, որպես միջակ ուժը մեր եկեղեցաշնչն ձեռնարկների, իրագործումների, շարունակեցին իրենց սրտագիտ կատերը նաև մեր նվիրապետական Աթոռների և թեմերի, ազգային-եկեղեցական կազմակերպությունների հետ՝ նոր կենսունակություն հաղորդելով հայ եկեղեցուն:

Այս հաստատումներով կարևոր հաշմակություն ունեցան 1974 թվականին Երրուսնեմի հայոց ամեն. ա. Եղիշե սրբազն պատրիարքի (Խովիս 25—օգոստոսի 1), Թուրքիայի հայոց ամեն. ա. Ընորիք սրբազն պատրիարքի (Սեպտեմբերի 9—Խոկումբերի 3) և թեմակալ սրացնորդների բազում այցելությունները Մայր Աթոռ ու Հայոց Հայրապետին:

Մայր Աթոռի օրինությամբ սիյուռում հայ եկեղեցին է հիմնական ու համազգային կենտրոնը, որին վատահած է նաև ազգային գրյատևումին հոկեյու և նորահաս մեր նոր սերնդին բրիսոննեական և հայրենասիրական դաստիարակություն շամբելու պատասխանատու և պատվակոր առաքելությունը, մեր ժողովորդի գերագույն նպատակների, ազգային ինեալների իրականացման ճանապարհի վրա:

Սիյուռքի հայությունը հնուու է իր հայրենիքից, կորցրել է իր ուռերի տակ հայրենի հողի կենսունակությունը և կառչած է հոգեկան ուժերի եկեղեցի, դպրոց, մամուլ, մշակույթ, հայ մնալու համար: Սիյուռքը ներուսական, հայատրով շամբել է ի գործ դնում այս բնագավառում:

Սիյուռքում այս տարի է ամեն տեղ սունական ու ահմասիան հնչեցին հայ եկեղեցու զանգերը և բաց ու պայծառ մնացին մեր աղոթքի տաճարները, որպես հայրենակները մեր ժողովորդի ոգեկան նվիրուսի, հրաշագործ զորության և անկուրում հավատքի: Բաց ու պայծառ մնացին նաև մեր կորական օշակների դրսերը հայ մանուկների առաջ:

Պետք է սրտագին գոհունակությամբ և երախտագիտությամբ արձանագրել, որ Հայոց Հայրապետի անմիջական հոկունությամբ անցաւ տարի էլ խաղաղ ու արդյունավետ պայմանների մեջ ընթացան Մայր Աթոռի հոգեոր, մշակույթին, կրթական, վանական, շինարարական աշխատանքները և մեր ներքին թեմական-եկեղեցական կյանքը:

Հայոց Հայրապետի գահակալության 19-րդ տարեարձի որակն առիթով՝ Մայր Աթոռում 1974 թվականի սեպտեմբերի 28-ին հանդիսավորությամբ բացումը կատարվեց Ղազարապատի վերակառուցված պատմական վանական սեղանատան և վիրատվությամբ Գալուստ Կյուլպետյան հաստատության և ներկայությանը նույն հաստատության հայկական բաժնի վարիչ պրո. Ռոբերտ Կյուլպետյանի:

Հայ ժողովուրդն իր մայր հայրենիքում, իր հարազատ պետականության ապահովության պահպան պայմաններում նոր տարին դիմավորում է արդար հապարտությամբ, շինարար և ստեղծագործ աշխատանքի պայմաններում, հրաշքի համազոր պարագործություններ, նվաճումներ արձանագրելով իր հոգեոր, նոր կանքի կերտման բոլոր բնագավառներում:

1974 թվականը մայր հայրենիքի համար եղավ արդարութեն հաղթանակների, կառուցումների, խիզախումների հարուստ տարի: Շարք մտան մշակութի նոր օջախներ, գիտության կաճառներ, արդյունաբերական հայկաներ: Ազգաստաններ դարձան խոպան նոր տարածություններ: Մեր ժողովուրդը հերոսական, հայենաչեն աշխատանքով ամբողյական հասարակությունը ու բարիքը: Այս հոգեվոր, հոգածական բարիքների էլ ավելի ամրապնդում են մեր հայրենիքի հզորությունը:

Անցնող տարին եղավ նաև խաղաղության տարի: Խոստումնալից և հուատության հետանիական բացվեցին աշխարհի խաղաղության համար: Մարդկությունը սկսեց թեթև շնչել՝ մեծ հոյսեր կապելով կայուն և արդար խաղաղության հաղթանակի հետ ողջ աշխարհում:

Այս, «խաղաղության փետուրն ավելի թանը է, քան հաղթանակի երկաթե քենը»:

Մայր Աթոռում այս տարի պատմական օրեր եղան Էկուտենիկ ոգով քոյլ եկեղեցների հոգեոր պետերի տված պաշտոնական այցելությունները Հայոց Հայրապետին:

Մայիսի 10—15 օրերին Մայր Աթոռ այցելեց Բովլարիայի S. Մաքսիմ Սրբազն Պատրիարքը, սեպտեմբերի 13—15 օրերին՝ ԱՄՆ-ի եկեղեցների ազգային խորհրդի պատվիրակությունը, նոյեմբերի 19—26 օրերին՝ Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք S. Նիկոլաոս Զ-ը:

Հայոց Հայրապետը Մոսկվայում ոռուաց եկեղեցուն և S. Պիմեն Պատրիարքին այցելեց հուլիսի 16—22 օրերին՝ ի գոլիս հայ եկեղեցու մի մեծ պատվիրակության:

Այս փոխարքան միջնեկեղեցական այցելություններով և հոգեոր պետերի ողջագործումով էլ ավելի սերտացան հայ եկեղեցու

և քոյլ եկեղեցիների եղբայրական կապերը՝ ի Քրիստոս սիրո և համագործակցության ոգով:

Մայր Աթոռ և Էջմիածինը, Հայոց աշխարհն ու հայ ժողովուրդը նոր տարիս շեմքին ավելի քան երբեք հզոր, միասնական, հավատով ին կենտրոնակ կանգնել են լուս գալիքի նկատմամբ պայծառ ու խանդավառ հեռանկարների առաջ:

Գալիս է նոր տարին, նոր հույսերի, ձգտումների, թոփշքների, խիզախումների տարին:

1975 թվականը մեր եկեղեցու և ժողովը դիմավորություններով: Դրանց թվում առաջնն է Սարիլյան եկեղեցի ՅՈ-ամրակի ոգեկոչումը, որին անդրադարձել է հանգամանորեն Հայոց Հայրապետը Ծննդյան նր քարոզի մեջ: Ողջ հայության համար նվիրական է մեր համատակների խնկելի և անունաց հիշատակը:

Ապրիլ 24-ը սակայն միայն սգի օր չէ մեզ համար: Այդ ոգեկոչման մեջ պես պես է արժանավորակես շեշտվի մեր օրերի մեր համագային վերածության վեհությունն ու հերոսականությունը: Հայ ժողովուրդը թե՛ իր մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի ողջ տարածքի վրա կարողացավ իր համատակությունը վերածել համագային վերածության:

«Բայց տարին մեկ անգամ, ամեն ապրիլի 24-ին, հայ ժողովուրդը մի պահ կանգ է առնեն և հարգանքով խոնարհում իր համատակների հիշատակի առաջ: Դա մարդկային է, դա քրիստոնեական է, դա բարոյական է: Այդ է թեկադրում նաև մեր օրերի խաղաղամիրության և ժողովուրդների բարեկամության գիտակցությունը: Եվ կարծում ենք ու սպասում, որ ոչ միայն մենք՝ հայերս, այլև բոյոր ժողովուրդները, բոյոր ազնիվ մարդիկ իրենց աղոթքներով միանան մեզ և մեր արդար դատին, որպեսզի մեն այսու այլս երեք և ոչ մի տեղ աշխարհում, ըկրներն Տեր-էլ-Զորներ և Առաջակցիներ, Ռատուաներներ և Մայտաներներ:

...Անա թե ինչու մեր եկեղեցին ու հայությունը համայն, ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, կանգնած Ապրիլյան եղեռնի վաթսունամյակի սեմին, երկյունածությամբ պիտի ոգեկոչն այս տարի հիշատակը մոտ երկու միլիոն իրենց զոհված զավակների, ու ապա միաթարված սրտով փառք պիտի տան հախախնամությանը՝ որ ամրակու ու ապահով հիմքերի վրա հաստատված իրենց արդի մայր հայրենիքը՝ ամենափառակոր կոթողն է նահատակների հիշատակը հավերժացնող և ամենազորագոր գրավականը ազգային գոյատնման, այլև ամենաուղիղ

ճանապարհը մեր ժողովրդի բոլոր արդար երազանքների կենսագործման՝ գալիք ժամանակներին:

Հարգանքը մեր բյուրավոր ճահատակներին, փառ ոք մեր ազգային վերածնութին, լուս, ավելի լուս հավերժական Մայր Հայաստանին:

1974 թվականի մարտ 18 թվակիր Վեհափառ Հայոցակետի սրբատառ կոնդակի հրահանգով 1975-ին ոգեկոչելու ենք համայնշակրթապետ Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի պատմության փառքի հիշատակը:

Մեծ խորհուրդ և հշանակություն ունի այս հորելյանը մեր ժողովրդի համար:

1975 թվականի սեպտեմբերի 28-ին երախտագետ սրտով և համազգային արժանավայր հանդիսավոր հշվելու է նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակը:

Այս հանդիսավոր առջիվ Մայր Աթոռում կազմվել են հորելյանական Կենտրոնական և Գործադիր հանձնաժողովներ,

որոնց վրա պարտականություն է դրվել՝ վերոհիշյալ հորելյանների հաջող կազմակերպություն ու անցկացումը Մայր Աթոռում և թեմերում:

Այս տարի նույնական, հոկտեմբերին, կը նշի մեծ շուրջով հայրենասեր մեծ քանատեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը:

Թող բարով գա նոր տարին:

Թող 1975 թվականը լինի խաղաղության, համերաշխության, խաղաղ գոյակցության տարի:

1975 թվականը թող լինի ս. Էջմիածնի հավերժական օրինության և հովանու ներքո հայ եկեղեցու համար հոգևոր նոր վերագրիտնքի, ազգային-եկեղեցական միասնության և համերաշխության տարի:

Այս զգացումներով և խոհերով, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, «Էջմիածն» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է բովանդակ հայության Ամանորը և ս. Ծննդնը:

Շնորհավոր նոր տարի և ս. Ծննդն:



Բայր Եկեղեցիներ



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ.
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՇԱԳՐԵՐՈՒ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլիսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մուկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մուկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈԼԱՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱԾԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամակոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
Ս.ԲՈՒԻՆԱ ԹԵՇՈՖԻԼՈՍԻՆ (Սոհիս-Աքեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
գ. Ա. Վ. Խ. Ե-ԻՆ, (Թքիլիսի),
Որումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
Ժ Ո Ւ Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բոխարեստ),
Բովդար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
Մ Ա Ք Ս Ի Մ Ի Ն (Սոֆիա),
Անտիոքի և համայն Արևելքի մարտնիս Պատրիարք, Նորին Սրբություն
կարդինալ Պ Ո Լ Մ Ե Ո Ւ Ծ Ի Ի Ն (Բելըրութ),
Անտիոքի և համայն Արևելքի հովան կաթողիկ եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն Մ Ա Ք Ս Ի Մ Ո Ս Ե Հ Ա Ք Ի Մ Ի Ն (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթողիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ա Ն Տ Ո Ւ Ա Ն Հ Ա Յ Ե Կ Բ-Ի Ն (Բելըրութ),
Քենթրքերի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Մ Ա Յ Ք Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն
(Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
Ս Ե Ր Ա Ֆ Ի Մ Ի Ն (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավալավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ի Ն (Բելգրադ),
Վարչապայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
Վ Ա Ս Ի Լ Ի Ի Ի Ն (Վարչավալ),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Ա Ն Ի Ն (Պրագա),
Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Ա Ն Ի Ն (Բելըրութ),
Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
Մ Ա Կ Ս Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դուկտ. Ֆ Ի Լ Ի Պ Փ Ո Թ Ը Ր Ի Ն (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Լ Լ Ո Յ Ի Ն (Վատիկան),
Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ Ֆ Բ Ա Ն Վ Ի Լ Լ Ո Յ Ի Ն (Վիեննա),
Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ Ֆ Բ Ա Ն Ս Ո Ւ Ա Մ Մ Ա Ր Տ Ի Ի Ն (Փարիզ),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ,
Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ Ա Ն Վ Ի Լ Լ Բ Բ Ա Ն Դ Ս Ի Ն
(Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, գերաշնորհ
Ռ Ո Շ Ե Է Հ Ձ Ե Գ Ա Ր Ա Յ Ի Ն (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. Մ Ա Տ Ո Ւ Լ Ի Մ Ի Ն (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Ա. Լ. Ֆ Բ Ե Դ Տ Տ Ո Ո Մ Ի Ն Գ Ի Ն (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ո Ն Յ Ա Ն Ի Ն (Բելըրութ),
Ֆրանչիսկյան միարանության կոստոդ
Մ Ո Ր Ի Լ Ի Ո Ս Ա Կ Կ Ի Ի Ն (Երուսաղեմ),

Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. Կ Ա. Ռ Ո Լ Ի Տ Ո Թ Ի Ն (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ

Ժ Ա. Ն Ռ Յ Ո Ւ Պ Ի Ն (Բաղդադ),

Մխիթարյան ուստի աբբահայր, Գերապայծառ Հայր

Պ Ո Ղ Ո Ս վարդապետ Ա. Ն Ա. Ն Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),

Մխիթարյան ուստի աբբահայր, Գերապայծառ Հայր

Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ս վարդապետ Մ Ա. Ն Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),

Վերապատվելի Հ Ա. Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Ե Լ Վ. Ա. Շ Յ Ա Ն Ի Ն (Մարսել),

Վերապատվելի Ս Ե Ն Ե Ք Ե Ր Ի Մ Ս Յ Ո Ւ Լ Ա Հ Յ Ա Ն Ի Ն (Նյու-Յորք):

«Քրիստոս ծնաւ և յայտնեցա»:

Աստուծո ողորմությամբ, նոր տարվո սեմին կանգնած, քրիստոնեական
մշտանորոգ հոգեգերով ու հոգևորով, հոգեկան ուրախությամբ կղիմավորենք
մեծ ավետիսը մեր Տիրոջ և Փրկչի Ծննդյան և քաղցր երգը երկնքի հրեշ-
տակներուն՝ «Փառք ի բարձուն Աստուծոյ և լերկիր խաղաղութիւն, ի մար-
դիկ հաճութիւն»:

Երկյուղած ու բերկրյալ սրտով կերկրպագենք մանկացած Աստված-
որդվոյն մսուրին առաջ ու կաղոթենք մեր հոգվոյն բովանդակ ջերմությամբ,
որ երկնքի պատգամը լսելի դառնա մեր աշխարհի բոլոր մարդկանց ու երկրի
վրա թագավորե արդարությունը և խաղաղությունը ազգություններու և պե-
տություններու միջև:

Սուրբ Ծննդյան ավետիսով, սրտանց կշնորհավորենք Ձերդ Սրբությունը
և կմայթենք որ միշտ հաստատ ու ծաղկալ մնա ձեր սուրբ մեծ եկեղեցին և
Տիրոջ օգնականությունը ու օրհնությունը միշտ տարածյալ՝ ձեր աստվածա-
սեր ժողովուրդի վրա:

Հաճեցեք ընդունիլ նաև Մեր բարի մադթաճքները Ձերդ Սրբության
արևատության և Ավետարանի լուսո փառքին նվիրված Ձեր մեծ առաքելո-
թյան համար:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս Փրկիչը մեր՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

*

**

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշա-
փառ և սուրբ ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան
ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնք-
ների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առջիկ ուղարկված
ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ
ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու հա-
մագործակցության սրտագին ոգին քոյլ եկեղեցիների ու կրոնական այլ հա-
մայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում
ստացված պատասխան շնորհավորականների համար:



Ականք

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՌ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Աստուծո ողորմությամբ, նոր տարվո աեմին կանգնած, քրիստոնեական
մշտանորդ հոլզերով և հովսերով, ցնծությամբ կղիմավորենք մեծ ավետիսը
մեր Տիրոց և Փրկչի Ծննդյան և քաղցր երգը երկնքի հրեշտակներուն՝ «Փառք
ի բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Երկյուղած ու բերկրյալ սրտով կերկրպագենք մանկացած Աստված-
որդվույն մսուրին առաջ ու կաղորենք մեր հոգվույն բովանդակ չերմությամբ,
որ երկնքի պատգամը լսելի դառնա մեր աշխարհի բոլոր մարդկանց ու երկրի
վրա թագավորե արդարությունը և խաղաղությունը ազգություններու և պե-
տություններու միջև:

Սուրբ Ծննդյան ավետիսով, սրտանց կշնորհավորենք Զեզ և Մայր Այսոռ
սուրբ Էջմիածնեն կհղենք Աստուծո օրինությունը և Մեր հայրական բարի
մայթանքները Աթոռիդ նվիրյալ միաբանության և համայն Մեր հավատաց-
յալ զավակներուն:

Թող անսասան և հավետ շեն մնա ձեր պատմական Աթոռը և միշտ Աստուծո օրինության ներքն՝ մեր հավատավոր ժողովուրդը ի Հայաստան և ի սիլուս աշխարհի:

Ծնորհք և սեր Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ամուսնով ստացվեցին ամենաչերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և Շերքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ԱՄԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ
ՂԱԶԱՐԱՊԱՏԻ ՎԱՆԱԿԱՆ
ՍԵՂԱՆԱՏԱՆԸ**

Հին տարվա մայրամուտի և նոր տարվա արշալուսի ակնեարթային միացմանը երթեր չի կարող անտարբեր մնալ որևէ գիտակից մարդ, որ ապրում է այս աշխարհում և զգում ժամանակի տրոփյունը:

Ողջ մարդկությունը ցնծությամբ է դիմավորում նոր տարին:

Ամեն ոք նոր տարվա սեմին խորը կայտառություն է զգում իր մեջ, ուժ սաւանում, ներշնչվում:

Նոր տարին այն հանգրվանն է, որը հիմնուին վերափոխում է մարդուն, կրկին դարձնում երիտասարդ, կրկին զինում ավյունով, պատանեկան եռանդով, որպեսզի մարդիկ կարողանան իրենց լավագույն երազմերը իրականություն դարձնեն:

Այս տարի նոյնական, ինչպես նախորդ տարիներին, Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը ու ուսանողությունը, գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, սրտի խոր հոգումով են դիմավորում նոր տարին:

Դեկտեմբերի 81-ին, երեքշաբթի, երեկոյան ժամը 20-ին, երկար տարիներից հետո առաջին անգամ լինելով, Ղազարապատի միաբանական սեղանատանը տեղի է ունենում ամանորյա հանդիսություն՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա են լինում Գերագույն հոգևոր խորիրդի անդամներ, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարա-

նի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Ամանորյա զարդարանքներով գեղեցիկացած սեղանատունը գրկարաց ընդունում է իր հյուրերին:

Սեղանն օրինում է Վեհափառ Հայրապետը:

Բացման խորք է ասում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քնն. Մարտիրանը՝ շնորհավորելով բոլոր ներկաների նոր տարին.

«Նոր տարի է,

Այսօր համայն մարդկությունը մի պահ կրկին հանգ է առնում, հետադարձ հայացք զցում իր անցած ճանապարհի վրա՝ տեսելու համար ժամանակի և տարածության մեջ իր ծրագրերի, երազանքների իրականացման պատկերը:

Սրտեր փոթորկող նվիրական այս պահին հավաքվել ենք այս անգամ Ղազարապատի վերջերս վերակառուցված միաբանական սեղանատան հարկի տակ՝ որպահությամբ դիմավորելու նոր տարին և վերանորոգելու ծառայության մեր ուսուր:

Որպիս ենք նշելու, որ մեր ժողովորդն իր հայրենի հողի վրա այս տարի ևս գիտության, արվեստի, մշակույթի և տնտեսության բնագավառներում արձանագրել է նորանոր հաջողություններ:

Որպահությամբ կարող ենք նշել զան, որ Զերդ Վեհափառության հայրական դեկապարության ներք Մայր Աթոռ և Էջմիածինը, նրա միաբանությունը, հոգևոր ճեմարանը այս տարի ևս խաղաղ պայմաններում առաջ են տարել իրենց ծրագրած աշխատանքները:

Ճեմարանն այս տարի ևս տվեց իր հոգեվոր հունձքը: **Դեկտեմբերի 22-ին շրջանա-**

վարտ սարկավագներից մեկը կուսակրոն, երկուսը ամուսնացրալ քահանաներ դարձան, իսկ երկու օր հետո, և Ստեփանոսի տոնին, երեք շրջանավարտ սահեր սարկավագ ձեռնադրվեցին:

Մեր աշխատանքների մեջ ունեցանք նաև վիճակներ, որոնց համար կարելի է ափսություն:

Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը հավերժի գիրկը գլորվող այս տարվա վերջին ժամին չեն կարող շիհել շատ սիրելի Ֆիրամոր կորուստը:

Սովորական, հասարակ մարդիկ ծնունդն են իրենց մոր, իսկ անձը, եթե մեծ է, արտկանում է իրեն ծնող ժողովրդին: Այս առումով, Վեհափառ Տեր, դուք Լուսավորչի գահի վրա արձանապես բազմելու օրվանից պատկանում եք հայ ժողովրդին:

Ձեզ ծնունդ տվող ժողովուրդը կենդանի է, ապրում և ստեղծագործում է թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի տարածքի վրա: Թող մեր ժողովրդի, Ձեր հոգևոր զավակների սերն ու հարգանքը ամոքեն Ձեր վշտուկի սիրոց և ուժ պարգևնեն Ձեր կյանքի հետագա գործունեության ընթացքում:

Խորհրդավոր այս պահին պատմության մատյանի վրա գրված մի էջ ևս է ավելանում և բացի չգրված կյանքի մի նոր էջ: Թող այս տարին լինի հույսի, լույսի շղերով պայծառացած կյանքի մի նոր հանգըրքան մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար, լինի միասնության, խաղաղ ստեղծագործության ժամանակաշրջան:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչության անունից շնորհավորել Ձեր նոր տարին:

Թող Սատված Ձեզ երկար ու երկար կյանք պարգևի՝ խաղաղությամբ յեկավարելու Հայաստանյաց եկեղեցին:

Շնորհավորելով բոլոր եերկաների նոր տարին, թույլ տվեք, Վեհափառ Տեր, բաժակ բարձրացնել Մայր Աթոռ և Էջմիածնի պայծառության, անսահմանության համար, Ձեր Սրբության առողջության և արևատության կենացը:

Կեցք Մայր Աթոռ և Էջմիածնի:

Կեցք և Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը:

Կեցք մեր բոլորին սիրելի Ամենայն Հայոց Հայրապետը»:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը երգում է «Էջ Միածնն ի Հօրէ» շարականը:

Ամանորյա սեղանի շորջ ստեղծվում է շերմագին, կրոնարույր և հայրենասիրական մժնողուր:

Ի դիմաց միարանության Մայր տաճարի լուսարարապետ և Հովհաննես Ամենուրյանը շնորհավորում է Վեհափառ Հայրա-

պետի նոր տարին և առաջարկում բաժակ բարձրացնել նոր կենացը:

Բոլոր եերկաները հոտնկալու բաժակ են բարձրացնել նորին Սուրբ Օծության արևալատության կենացը, սրտագին ծափերի ներքը:

Ընմարանի սաները երգում են Հայրապետական մալոթանը:

Նոր տարվա ողջունի և շնորհավորական շերմ խոսքեր են ասում, ի դիմաց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի՝ Սամվել Անթուպյանը, և Հակոբ արկ. Գլունճյանը՝ ի դիմաց ուսանողության:

Այնուհետև գործադրվում է գեղարվետական կոկիկ մի հայտագիր՝ խինորվ և ժիանաղով լցնելով միարանական սեղանատունը և բոլոր եերկաների հոգիները:

Հանդիսավոր ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրինության խոսքով ու պատգամով և միաբերան երգված Տերունական աղոթքով:

Ժամը 12-ն է: Եվս մի ակնթարթ՝ և հնչում են Մայր տաճարի զանգերը, հնչում 365 անգամ, վերջին անգամ վերիիշելու համար անցած տարվա ամեն մի օրը:

Մայր Աթոռի միարանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը նոր տարվա իրենց անդրանիկ լույսայն աղոթքն են մատուցում Սատուն Մայր տաճարում, որպեսզի նոր տարին լինի խաղաղության, առասության, հայրենիքի բարօրության և հայ ժողովրդի միասնության տարի:

ԱՄՄՆՈՐՅԱ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՋԱՐՈՒՄ

Հունվարի 1-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Մայր տաճարում սկսվում է ամանորյա և պատարագը: Պատարագում է տ. Եղմիկ աբեղա Պետրոսյանը:

Ս. պատարագին եերկան է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ և պատարագի, Խման և սեղանի առաջ, հոգեշտն քարոզ է խոսում տ. Արիս եպս. Շիրվանյան՝ «Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ ու առաքեացն զիս, մինչ առոր կայ. գայ գիշեր, յորժան ոչ ոք կարէ գործել» (Հովհ. թ 4) բնարանով:

Սրբազն հայրը ամդրադանում է կյանքի ու ժամանակի խորհուրդներին, դրանք եերկայացնում կրոնական մտածողության լույս տակ, հանգամանորեն կանգ առնում յորաքանչյուր մարդու կյանքի հաշվեհարդարի և դրանից բխող բարոյական բարիքների վրա:

Վերջում տ. Արիս եպս. Շիրվանյանը մասնավորապես և չերմ խոսքերով շնորհա-

վորում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նոր տարին լավագույն ցանկություններով:

Այնուհետև Խման և սեղանի առաջ հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Ս. Պատարագի ավարտից հետո Վեհափառ ընդունարանում Վեհափառ Հայրապետը բարեհանում է ընդունել Մայր Աթոռի միաբանությանը:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, դիմանակն տ. Արտեն եպս. Բերերյանը մի անգամ ևս շնորհավորում է Վեհափառ Հայրապետի նոր տարին:

Նոր տարվա բարերաստիկ առիթով Աղքադաշնի հայոց թեմի առաջնորդ տ. Վահան եպս. Տերյանը Վեհափառ. Հայրապետին է նվիրում հայ մշակույթի բացառիկ միգանձ՝ մագաղաթյա երկաթագիր մի Ավետարան (8—10-րդ դարի):

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհավորում է Մայր Աթոռի միաբաների նոր տարին, տալիս նրանց նր օրինությունն ու պատճառը:

Մայր Աթոռի միաբաները աջամամբույր Հայոց Հայրապետից ստանում են 1975 թվականի օրացույց:

ԾՐԱԳԱԼՈՒԹՅԻՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հոգևարի 5-ին, Կիրակի. Ծրագալոյց Ծընթեան և Աստուածայայնութեան Տեառն մերոյ Ֆիտուսի Քրիստոսի:

Օրվա տոնի կապակցությամբ Մայր տաճարում, երեկոյան ժամը 17-ին, պաշտվում է հանդիսավոր ժամերգություն:

Եկեղեցական թափորով Մայր տաճար է իշխում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետու:

Համեմատվոր ժամերգությունից հետո կարդացվում են օրվա խորհուրդը նշող Ավետարանները և ընթերցվածքները, որից հետո սարկավագները Ավագ խորանից ընթերցում են Դամիետ մարգարեն «Երից մանկանց» օրիներգությունը:

Այնուհետև սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Արիս եպս. Շիրվանիանը:

Ս. պատարագի ավարտին պաշտվում է նախատեսակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Երեկոյան ժամը 20.30-ին Ղազարապա-

տի միաբանական սեղանատանը տրվում է նաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ձեմարանի ուսանողությունը՝ գիտակորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ծաշկերույթի ընթացքում, օրվա խորհրդի ներշնչումով, շնորհավորական ժարմ խոսք է ասում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հովհան եպս. Սահմուրյանը:

Վերջում օրինության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հոգևարի 8-ին, Երկուշաբթի. Տօն Ծերմենան և Աստուածայայնութեան Տեառն մերոյ Ֆիտուսի Քրիստոսի:

Մայր տաճարում պաշտվում է ս. պատարագ և տեղի է ունենալ Զրօրինյաց հանդիսավոր արարողությունը:

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով իշխում է Մայր տաճար և զգաստավորում ավանդատանը:

Ժամը 11-ին հնչում են եկեղեցու զանգերը: Ակսում է ս. պատարագը:

Պատարագում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ս. խորանին և Վեհափառ Հայրապետին սպասարկում են տ. Արտեն և տ. Գևորգ սրբազնեները, գավազանակիր տ. Եղիշիկ աբեղան, փեշակիրներ տ. Մասիս և տ. Թորգում արեղաները և սարկավագների դասը:

«Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի ներշնչումով, քարոզում է Վեհափառ Հայրապետը (Սույն քարոզը տևում «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Վեհափառ Հայրապետի՝ Ծննդյան սույն քարոզը հունվարի 7-ին, երեկոյան ժամը 23-ին, ձայնասկովեց Երևանի ոսկինկայացից:

Ս. պատարագի ավարտին կատարվում է Զրօրինյաց հանդիսավոր արարողությունը՝ ի հիշատակ Հորդանան գետում Քրիստոսի մկրտության ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Այնուհետև Վեհարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետն ընդունում է բազմաթիվ ոխտավորների, բարեհանությամբ ստանում նրանց շնորհավորանքները և տալիս նրանց նր օրինությունը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ. ձեզ և մեզ մեծ անտիս»:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ՀՈՒՐԵՐ

Հունվարի 3-ին, ուրբաթ.—Այսօր Երևանի հայրապետական վիլայում տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

* * *

Հունվարի 7-ին, երեքշաբթի.—Ֆիշատակ մենելոց.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգիստ «Վասն համօրէն Անչեցելոց»:

* * *

Հունվարի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի է ունենում միարանական հերթական հավաքույթը, որի ընթացքում զեկուցում է, հասուն հրավերով հավաքույթին ներկա գտնվող, համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դոցենտ Մակիշ Ռոգոնյանը՝ «Օրենք և արդարություն» թեմայով:

Դասախոսությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 9-ին, հինգշաբթի.—Այսօր Երևանի հայրապետական վիլայում Վեհա-

փառ Հայրապետի նախագահությամբ գումարմարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որ կազմվում է Մայր Աթոռից մերս կարգապահական հանձնաժողով՝ նետևյալ կազմով. տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան, տ. Հմայակ եպս. Ինդոյան և պրն. Օննիկ Թոփովյան:

* * *

Հունվարի 10-ին, ուրբաթ.—Այսօր հոգևոր մեմարանում, կիսամյա քննություններից և ամանորյա և ս. Ծննդյան տոնակատարություններից հետո, վերսկավում են 1974—1975 ուսումնական տարվա դասավանդությունները:

* * *

Հունվարի 12-ին, կիրակի.—Է օր Ծննդեան:

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Նորոգող հնութեանց, նորոգեան և զիս, նորոգ զարդարեա» (շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Խովն օրը, պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը Ամանորի և ս. Ծննդյան

տոների առիջով մեծ սիրով ընդունում է Մայր Աթոռի երգչախմբին՝ գլխավորությամբ խմբավար, վաստակավոր արտիստ Խորեն Մելիսանեցյանի:

Այդ առիջով Վեհափառ Հայրապետը շնորհավորում է նաև խմբավար Խորեն Մելիսանեցյանին՝ վաստակավոր արտիստի կոչում ստանալու առիջով, և երգչախմբին տալիս իր օրինությունն ու հայրական պատգամը:

Շնորհակալավան և երախտագիտական խոր է ասու երգչախմբի խմբավար Խորեն Մելիսանեցյանը:

Այնուհետև երգչախումբը աշահամբույրով հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից:

Հունվարի 18-ին, երկուշաբթի.—Ը օր Մընթեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիշուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մասուցում տ. Եղիշիկ արելա Պետրոսյանը:

Հունվարի 14-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Ալեքոն է ժամանում Լիքանանի առաջնորդ տ. Տաճառ արքեպ. Ուրֆայանը, որը Մայր տաճարում իր աղոթքն ու ուխտը կատարելուց հետո դնդունվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից:

Օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, Տաճառ պրեզիդին դիմավորում են Մայր տաճարի լուսարարակետ տ. Հովսիկ Եպո. Սանթուրյանը, Սարգիս սրբ. Սարգսյանը և Աղվան սրբ. Գասպարյանը:

Հունվարի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի է ունենում միարանական հերթական հավաքույթը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը «Արդարության գաղափարի հասկացությունը» թեմայի շորջ բովանդակալից դասախուություն է կարդում:

Հունվարի 16-ին, հինգշաբթի.—Հինգ տոմարով և Ծննդյան տոնի առիջով պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ հավատացլավերին միսիքարելու համար Ախալցխան մեկնեց տ. Եղիշիկ արելա Պետրոսյանը, Ախալքալաք՝ տ. Եղիշի քին. Բաղրամյանը, Օրջոնիկիձե՝ տ. Նշան քին. Բեյլերյանը և Ժիրայր սրբ. Սիմոնյանը, Արմավիր՝ Հարություն սրբ. Սարգսյանը:

* * *
Հունվարի 19-ին, կիրակի.—Ա. կիրակի զկեն Մննդեան.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մասուցում տ. Արիս Եպո. Շիրվանիանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Կանայի հարասանիքի խորհրդի մասին:

Ա. պատարագին ներկա էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և ոխտափորաբար Մայր Աթոռում գտնվող Լիքանանի առաջնորդ տ. Տաճառ արքեպ. Ուրֆայանը:

Ա. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետին նախագահությամբ տեղի է ունենում հոգեհանգստան մասնակիր արարողություն տ. Տաճառ արքեպիսկոպոսի նորոգ հանգույցալ տիրամոր Բիշառակին:

Ա. պատարագին ներկա էին նաև ոխտափորաբար Մայր Աթոռում գտնվող Բուենոս Այրեսի տ. Գրիգոր Լուսավորիչ դպրոցի 1974 թվականի շրջանավարտների շորջ 20 հոգուց բաղկացած երկու խումբ՝ ղեկավարությամբ դպրոցի տնօրենություն օրիորդ Բակլայանի:

Հավարու և պատարագի Վեհափառ Հայրապետը բարեհանում է ընդունել շրջանավարտներին և տալ նրանց հայրական իր օրինությունն ու իր պատգամը:

Վեհափառ Հայրապետը հանգամանորեն հետաքրքրվում է նաև Արգենտինայի հայոց եկեղեցական, մշակութային կյանքով և ուսանող ոխտավորների միջոցով իր ողջուներն ու օրինությունն է ուղարկում Արգենտինայի բովանդակ հայությանը:

* * *
Հունվարի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միարանական հերթական հավաքույթը, որի ընթացքում գեկուցում է Սարգիս սրբ. Սարգսյանը՝ կրոնական արդարության մասին:

* * *
Սույն թվականի հունվարի 22—28-ը Մայր Աթոռում էր գտնվում Սուսկվայում Միհացյալ Նահանգների դեսպանատան աշխատող ների հոգևոր մատակարար և ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցու քահանա Բայր Ռեյմոնդ Օպենհայմը՝ որպես Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի հոյր:

Մայր Աթոռում գտնվելու օրերին Բայր Օպենհայմն այցելեց Հայաստանի պատմական վանքերն ու հուշարձանները, մայրաքաղաքի տեսարժան վայրերը, եղավ Անանում և Սարդարապատում:

Հարգելի հոյրին Վեհարանում բարեհանց ընդունել Հայոց Հայրապետը:

Հայր Օպենհայմը մի շաբթ հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակիցների մետք՝ գլխավորությամբ բաժնի վարիչ տ. Սրբեն եպս. Բերբերյանի:

Հայր Օպենհայմը հունվարի 28-ին, երեցարթի օրը, առավոտյան, հրաժեշտ տվեց Մայր Աթոռին և լավագույն տպավորություններով մեկնեց Մոսկվա՝ իր պաշտոնատեղին:

* * *

Հունվարի 25-ին, շաբաթ.—Տօն ս. Սարգիս զորավարին.

Այսօր Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցու ոխտավորության օրն է և եկեղեցու անվանակոչության տոնը: Այս առիթով տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի հրավերով պատարագում և քարոզում է տ. Հմայակ եպս. Ինդրյանը ս. Սարգիս զորավարի կյանքի և համատակության հոգեվոր, բարոյական հաշնակության մասին:

* * *

Հունվարի 26-ին, կիրակի.—Բ կիրակի զեմանի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քին. Հակոբյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Հմայակ եպս. Ինդրյանը՝ ս. Սարգիս զորավարի համատակության խորհրդի մասին:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռում գտնվող ամերիկյան եպիսկոպոսական եկեղեցու հոգեվորական Օպենհայմը:

Ս. պատարագի ավարտին տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր կարգ՝ Օպենհայմի նորոգ հանգույցալ տիկնոջ հիշտակին:

* * *

Հունվարի 29-ին, չորեցարթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց Հայաստանում գտնվող սփյուռքահայ ականավոր հրապարակախոս և գրող, Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիր Անդրանիկ Ծառուկյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, ովաստավորաբար Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանագետ ու Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի տեսուց տ. Շահն արքեպ. Անեմանը:

Երևանի օդանավակարանում տ. Շահն արքագանին, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորեց Մայր տաճարի լուսարարացեան տ. Հուսիկ եպս. Սամեթորյանը՝ ընկերակցությամբ Սովոր սրբ. Գասպարյանի: Մայր տաճարում իր ոխտն ու աղոյթը կատարելուց հետո, տ. Շահն արքեպահուուը Վեհափառանում ընդունվում է Վեհափառ Հայրապետի կողմից:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Հընդկաստանից ովաստավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Վագգեն վրդ. Թադոյանը:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ տեղի ունեցավ միաբանական հավաքույթ, որ Հարություն սրբ. Սարգսյանը խոսեց հայունի գրող Սերո Խանզադյանի «Միհթար սպարապետ» պատմավեպի բովանդակության և կերպարների մասին ու ապա համառոտակի Անդրկայացրեց հեղինակի կենսագրությունը:

Այնուհետև տեղի ունեցավ «Միհթար սպարապետ» պատմավեպի մասին մտքերի աշխուզ փոխանակություն, որին մասնակցեցին Մայր Աթոռի վարդապետ և սարկավագ միաբանները:

Հավաքույթին ներկա էին Վեհափառ Հայրապետը, տ. Շահն արքեպ. Անեմանը և պր. Անդրանիկ Ծառուկյանը:

Հավաքույթին ներկա էր նաև «Միհթար սպարապետ» պատմավեպի հեղինակ, գրող Սերո Խանզադյանը, որը հավաքույթի ավարտին խոսեց պատմավեպի ստեղծման հանգամանքների, ստեղծագործական իր որոնումների և վեպի դրական ու բացասական կերպարների և պատմավեպի օտար լեզուներով թարգմանությունների մասին:

* * *

«Էջմիածին» ամսագրի սույն համարից սկսած փոխվում են նրա բոլոր գլխավարդերն ու վերջնազարդերը:

Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և ցուցմունքներով վերոհիշյալ նկարչական աշխատանքները ճաշակով և սիրով կատարել են Ակարիչներ Սլքեր և Արթուր Կարագյան եղբայրները, որոնց և հայտնում ենք խմբագրության շնորհակալությունները:

ՓԱՌՔ ՄԵԾԱՅ



ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*

S. S. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

1. ՏԵՂԱԿԱԼԱԿԱՆ ԾՐՁԱՆ

1. Հայ եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդեպ, կոչ հայ հավատացյալներին՝ կրծքով պաշտպանությունը, «Էջմիածին», 1944, Ա. 1—3:

2. Կոչ հայ ժողովրդին, համախմբվելու մայր հայրենիքի շուրջը և պաշտպանելու հայրենիքի պատությունն ու անկախությունը, «Էջմիածին», 1944, Ա. 6—8:

3. Կոչ հայ հավատացյալ ժողովրդին, կազմակերպելու համագանձնություն՝ «Սաստանի Դավթի» անվան տաճական շարապան կառուցման համար, «Էջմիածին», 1944, Ա. 9—10:

4. Հայրենական պատերազմը և հայ ժողովությը, հայ ժողովով Հայրենական պատերազմում ցուցաբերած անօրինակ ներության մասին, «Էջմիածին», 1944, Բ. 4—5:

5. Ս. Էջմիածինը, քարոզ Ամենայն Հայոց Հայությության, հայ եկեղեցու և Էջմիածինի դերի պատմական նշանակության մասին, «Էջմիածին», 1944, Զ 6—7:

6. Հայրենիք, հոդված հայրենի երկրի նշանակության մասին, «Էջմիածին», 1944, Է—Թ 8—4:

* «Էջմիածին» ամսագրի 80-ամյակի առիթով հրատարակում ենք S. S. Գեվորգ Զ և S. S. Վազգեն Ա Հայրապետների՝ ամսագրում տպագրված կոնդակների, քարոզների, կոլույթների մատնագիտությունը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7. Ս. Էջմիածինի պատվիրակության աշխատանքները, «Էջմիածին», 1944, Ժ—ԺԲ 3—6:

8. Հայ եկեղեցու և հայ ժողովրդի բռնած դիրքը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, հոդված, «Էջմիածին», 1945, Ա—Բ 3—5:

9. Զեկուցում ս. Էջմիածինի բարձրագույն հոգևոր իշխանության, իր քառամյա գործունեության մասին (1941—1945 թվ.), «Էջմիածին», 1945, Ը—Ժ 6—16:

2. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԾՐՁԱՆ

10. Ուկրած ՍՍՌ Միության Ժողովրդային կոմիսարների տվեսի նախագահ Ի. Վ. Ստալինին, Ա.ՄՆ-ի պրեզիդենտ Պարոն Հ. Ս. Տրումանին, Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր պարոն Կ. Ո. Էտուլինին, «Էջմիածին», 1945, ԺԱ—ԺԲ 8—10:

11. Երկու խոսք հայ ժողովրդին, «Էջմիածին», 1946, Ա. 9—10:

12. Ծրագրերական գրություն «Արտասահմանի առաջնորդներին»՝ կազմակերպելու հայ ժողովրդի ներգաղյութի գործը, «Էջմիածին», 1946, Ա. 12—18:

13. Կոնքակ Պ. Խոման Խայամին՝ Գրիգոր Լուսավորչի առաջին աստիճանի ականակուր ուկա շրանցանով պարգևատրելու մասին, «Էջմիածին», 1946, Բ—Գ 3:

14. Անդրամիկ օրինության կոնդակը (գոարար), «Էջմիածին», 1946, Դ—Ե 3—5:

15. Անդրամիկ օրինության կոնդակը (աշխարհաբար), «Էջմիածին», 1946, Դ—Ե 6—10:

16. Հայոց եկեղեցի, հոդված հայոց եկեղեցու դերի

և պատմական հշանակության մասին, «Էջմիածին», 1946, Զ—Է 17—20:

17. Ծրաբերական գրություն Արտասահմանայան թևերի առաջնորդներին, «Էջմիածին», 1946, Ը—Ժ 3—4:

18. Կոնդակ՝ Հայրապետական Աթոռ Սահմ Էջմիածին տեղափոխելու 500-ամյակի առթիվ (գրաքար), «Էջմիածին», 1946, Ը—Ժ 5—7:

19. Կոնդակ՝ Մեծի Տաճա Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին վենարի վրա աղամանցա խաչ կրելու իրավունք շնորհելու մասին, «Էջմիածին», 1947, Ա—Բ 3—4:

20. Կոնդակ՝ ուղղված Համաշխարհային հայկական կոնգրեսին, «Էջմիածին», 1947, Գ—Դ 3—7:

21. Կոնդակ՝ դոկտ. Հյուլեստ Ջոնսոնին, ս. Լուսավորչի առաջին կարգի ոսկյա աղամանդազարդ շրանցանով պարզեցրելու մասին, «Էջմիածին», 1947, Ե—Զ 9:

22. Կոնդակ՝ ամանօրյա ողջունի և հայրապետական նորդորի, «Էջմիածին», 1948, Ա—Բ 3—9:

23. Կոնդակ՝ Հայկական քարեգործական ընդհանուր միության, «Էջմիածին», 1948, Ա—Բ 10—11:

24. Կոնդակ՝ Լու-Անջելոս քաղաքի և Հակոբ Եկեղեցու Գեորգ քահանա Գասպարյանի կարգալուծության մասին, «Էջմիածին», 1948, Ա—Բ 40:

ԽԵ 11. ընդ ամենայն տիեզերս փիս ի ծագս երկրի (հմմտ. ԶԹ 2, ՂԸ 4):

ԽԵ 10. ամենայն՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. ԾԽ 10):

ԽԵ 17. բան բերանոյ իմոյ փիս բանս իմ (հմմտ. ԺԸ 15, ԼԸ 4, ԾԳ 4, ՀՀ 1 և այլն):

ԽԵ 19. զիրս սոոր և զիոդի խոնարի փիս զիրս խոնարի և տառապեակ (հմմտ. Ծ 12, 19):

ԾԲ 6. և լամօթ լիցին՝ չիք մյուս բնագրերում (հմմտ. Լ. 4, 26):

ԿԱ 8. զօրութիւն փիս փրկութիւն (հմմտ. ԿԱ 12):

ԿԳ 5. աղնոցին ոյք ուղիղ են սրտիւր փիս զամբիծն (հմմտ. Լ 11, Ժ 8, ՀԱ 11, ԿԳ 11 և այլն):

ԿԳ 5. և ատելիր իմ փիս ոյք հապածէին զիս (հմմտ. ԺԸ 18, 41, ԽԳ 8, 11, ԶԹ 8, ԶԸ 24):

- ԿԸ 15. բամաց՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԺԵ 17, ՀԶ 18, 20, ԾԶ 28, ԾԽԳ 7):
 ԿԸ 16. խորոց՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԿԸ 28, ԿԸ 2, ԾԶ 24): Նույնը տե՛ս նաև Հ 20:
 ԿԸ 36. շինացին՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԿԸ 36):
 Հ 17. զարդարութիւնն փիս զարանչելիս (Բնմտ. ԼՇ 28, ԼՇ 10, ԽԹ 6, 16, Հ 15 և այլն):
 Հ 20. միսիթարեցեր փիս կնամանացուցեր (Բնմտ. Հ 21):
 ՀԱ 12. զարդար՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԼՇ 14, ԼՇ 18, Խ 2, ԿԹ 6, ՀԱ 18):
 ՀԲ 20. և եղեն՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ՀԲ 19):
 ՀԳ 10. սուրբ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԼԲ 21, ՀԱ 19, ԾԲ 1, ԾԵ 47 և այլն): Նույնը տե՛ս նաև
 ՀԳ 18, 21:
 ՀԶ 10. և նև՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ՀԶ 8):
 ՀԸ 17. բարկացուցին փիս դառնացուցին (Բնմտ. ՀԸ 40):
 ՀԸ 40. զբարձրեան փիս զնա (Բնմտ. ՀԸ 17):
 ՀԸ 48. արար զնան և զարուեասու իր յերկրին եգիպտացու և ի դաշտին Տայանու փիս եղ յեգիպտու զնան իր և զարուեասու իր ի դաշտին Տայանու (Բնմտ. ՀԸ 12):
 ՀԸ 50. զարտութիւն բարկութեան փիս շատի բարկութեան (Բնմտ. ՀԸ 49 և այլն):
 ՀԸ 54. զիմանկ ծառագութեան փիս շափով զժառանգութիւնն (Բնմտ. ՀԳ 2):
 ՀԸ 58. դարձան՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ՀԸ 41, 57):
 ՀԱ 8. որբոյն և այրոյ փիս որբոյն և աղքատի (Բնմտ. ԾԽԵ 9, նաև Ելք ԽԲ 22, Բ օր. ԺԴ 29, ԾԶ 11, ԽԳ 17 և այլն):
 ՀԲ 8. ամենալմ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԼԲ 8, 14, ՀԴ 4, ԿԸ 7):
 ՀԳ 18. զողորմութիւն փիս զբարիս (Բնմտ. ԿԸ 20, ՀԶ 9, ՀԸ 34):
 ՀԵ 9. յախտեան՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ՀԵ 12):
 ՀԸ 14. ձեռն փիս աջ (Բնմտ. Թ 12):
 ՀԸ 47. դարձուցանն զերես քր փիս դառնաս (Բնմտ. ԾԲ 1, ԽԶ 9, ԽԹ 8, ՀԸ 15 և այլն):
 ՀԸ 53. Աստուած. յախտենից՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. Խ 14, ԾԵ 48):
 ՀԹ 2. զամենալմ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԴՐ 4):
 ՀԹ 6. որպէս դալարի՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ՀԹ 5):
 ՀԹ 16. ձեռաց՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. Թ 17, ԽԵ 5, ՀԸ 17, ՀԱ 5 և այլն):
 Ղ 4. նովամին՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԶ 9, ԼՇ 8, ԾԶ 2, ԿԲ 8):
 ՂԱ 6. մեծ եմ փիս մեծ եղեն (Բնմտ. ԾԳ 24):
 ԾԱ 27. յախտեան՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. Թ 8, Կ 8):
 ԾԳ 28. ձեռաց՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԽԵ 2):

- ՇԴ 29. զգեստ փիս զջուրս (Բնմտ. ՀԸ 44):
 ՇԴ 39. ի տու... ի գիշերի փիս ի գիշերի (Բնմտ. Ա 2, ԽԱ 3, ԽԱ 9, ԾԴ 11 և այլն):
 ՇԴ 45. զվլապութիւնն փիս զարդարութիւնն (Բնմտ. ՀԸ 56, ՂԸ 7, ԾԺԸ 88, 148, 187, 188):
 ՇԵ 7. բարկացուցին փիս դառնացուցին (Բնմտ. ՀԸ 40, 58, ԾԵ 16, 29 և այլն):
 ՇԵ 11. ծով փիս չոր (Բնմտ. ՀԸ 53):
 ՇԵ 44. ձայնի՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. Ե 3, ԽԵ 6, Լ 28, ԾՇԴ 1 և այլն):
 ԾԶ 17. յոյժ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԼԸ 7, 9, ԾԺԸ 10, ԾԽԵ 7):
 ԾԶ 18. սիրտք փիս անձինք (Բնմտ. ԾԶ 12):
 ԾԶ 33. յերկիր ծարաւու փիս ի ծարաւ (Բնմտ. ԾԶ 35):
 ԾԺ 7. արդարութիւն փիս ճշմարտութիւն (Բնմտ. ԶԸ 15, ՂԳ 15, ՂԶ 2, ՂԸ 4 և այլն):
 ԾԺԳ 5. զո՞ւ տեսեր՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԺԳ 8):
 ԾԺԳ (8). յերկինն և յերկրի փիս յերկինն ի վեր, յերկինն և յերկրի (Բնմտ. ԾԺԲ 6, ԾՂԴ 8):
 ԾԺԸ 87. յոյժ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԺԸ 4):
 ԾԺԸ 105. լոյս տայ շատաց խոնց փիս լոյս շատաց խոնց (Բնմտ. ԾԲ 4, ԾԴ 39):
 ԾԺԸ 181. ամձն իմ՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԶԳ 2, ԾԺԸ 20):
 ԾԺԸ 158. զպատուիրան փիս զիսօս (Բնմտ. ԶԸ 32, ԾԺԸ 80, 63, 184, 188):
 ԾԻ 2. եկանց՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԻ 1):
 ԾԻԹ 8. մեղութեանց փիս ամօրէնութեանց (Բնմտ. ԽԻ 22, ՂԳ 5, 7, 18, ԾԳ 9):
 ԾԱԱ 5. յարկի՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԽԵ 8):
 ԾԽԵ 10. զերկին եգիպտացու փիս զեգիպտու (Բնմտ. ՀԸ 12, Զ 6, 11):
 ԾԽԵ 18. մեծ փիս կարմիր (Բնմտ. ԾԳ 25):
 ԾՂԸ 16. որ առաջնորդէր նոցա փիս ի նուս (Բնմտ. ԾՂԸ 10, 24):
 ԾԽԲ 7. յիմէն՝ չիք մյուս բնագրերում (Բնմտ. ԾԽԵ 4):
 Նմանակությունը զգալի փոփոխություններ է առաջացնել նաև սաղմուների վերնագրերում: Այսպես, ԽԲ 1, ԼՇ 1 և ԾԹ 1 համարներում բայերն թարգմանությունը բազմաթիվ այլ վերնագրերի ազդեցությամբ ավելացրել է ի կատարած, իսկ ԺԵ 1, ԾԴ 1 և ԾԸ 1 համարներում սաղմուն բարը: ՀՆ սաղմոսի վերնագրում ՀԵ 1-ից փոխանցվել են առ ասորեատանեայս, իսկ ընդհակառակմ՝ մի պապականեր բա-

³² Սաղմոսների հայերն թարգմանությունը ունի նաև մի շեղում, որը կատարվել է, ըստ երևոյթին, Աստվածաշնչի մյուս գրքերի ազդեցությամբ. ԼԸ 18. պանդուխա և ն և ամին մի փիս պանդուխա և ն և (Բնմտ. ՍԱԱ. ԽԳ 4, ՂԱԿ. ԽԵ 28, Ա ՄԱԿ. ԽԹ 15, Ա ՊԱԿ. Բ 11):

Ները: ԽԸ 1 և ՂԸ 1-ը ստացել են օրինութեան բառ:

«Նամակալության դեպքիրի այսպիսի հաճախակիրությունը պետք է բացատրել այն հանգանակությով, որ սաղմուներն անձիր են արվել, և առանձին արտամալությունների նույնությունն զգալ դժվարություն չի հարցուցի: Հետ որում, հարկ է ենթադրել, որ այս գործում կարևոր, եթե ոչ՝ Վճռական, ուր են խաղացել գրիշները: Դրա պերճախոս վկանությունն այլ է, որ հաճախ սաղմուների հայերնեն բարգմանության մեջ հունարենին և մյուս բնագրերին համապատասխանող ձևերի կողքին ձեռագրերը նշում են առև համակրոյամբ ստեղծված տարբերեցվածները: Այսպես, օրինակ, ԾԷ: 26 համարի «և օրինեցար զեկ ի տանէ Տեառն» նախադասության փոխարեն Զոհրապահի հրատարակության որոշ ձեռագրեր տալիս են՝ «և օրինեցար զեկ յանուանէ Տեառն», նովանադրվ ԾԻ: 8 համարին: Վերջինն, իր հերթին, ԾԷ: 26 համարից առանձին ընթօդինակություններում ստացել է՝ ի տանէ Փիլ յանուանէ տարբերեցվածը: ԽԳ. 8 համարի «այլ դու փրկւեց զմեկ ի թշնամնաց մերոց» նախադասությունը որոշ ձեռագրեր նման այլ հատկանիւթյունների ազդեցությամբ դարձրել են «...ի ձեռաց թշնամնաց մերոց» (Բմնն. ԾԷ: 18, 48, ԾԸ: 2, ԽՍԲ: 9): Խոկ ԾԻ: 5 համարի «յուսացաւ անձն ի և Տէր» նախադասության փոխարեն ձեռագրերից ու համեր ուժնեն «յուսացաւ Խորակէլ ի Տէր», որը բխում է: ԾԻ: 7 կամ Ծ. 3 համարից: Այսպիսի օրինակները, որոնք, իմացին աշվեց, նազվադեպ չեն, ցոյց են ուղախ, որ նմանակությունը նշանակածից դեռ է խալացել սաղմուների հավերնեն բարգմանության ձեռացրական տարբերեցվածների հարատացման գործում³³.

Պետք է նշել ասկայն, որ տվյալ երևույթը հայերեն թարգմանութան տրամադրութան մեջ մասնաւոր է:

³³ Հմատ. Առկ' Թ 4—Զ ոմանք՝ ոչ քննիլ փիս ոչ խնդրի (Թ 18-ից), ԺԷ 21—Զ ոմանք՝ անքծութեան փիս սրբութեան (Լ 9-ից), ԽԱ 20—Զ ոմանք՝ զգուութիւն փիս զօգնակամութիւն (Թ 12-ից) և այլն: Սադումունենի վերանակոսով Բիթու: ՀԿ 1, ՀԷ 1, ՀԸ 1.


φέρεται, θείκηπο το οποία συμβιβάσθηκε, αγάπη οπίζεται προσεκτικά την ιδέα της θεωρητικής επιστήμης της φυσικής. Η θεωρητική φύση δεν μπορεί να γίνεται στην πραγματικότητα, αλλά μόνο στην ιδέα της φυσικής. Η θεωρητική φύση δεν μπορεί να γίνεται στην πραγματικότητα, αλλά μόνο στην ιδέα της φυσικής. Η θεωρητική φύση δεν μπορεί να γίνεται στην πραγματικότητα, αλλά μόνο στην ιδέα της φυσικής.

Ինչպես տեսանում ենք, այս համականաքը էական հաշմակություն ունի և անպայման պետք է հաշվի առնելի տարրեր բնագրին առնշակցությունը բացահայտվող գործում:

(Ծառուցակելին)

ԾԽ 1, ԾԽԱ 1, ԾԽԴ 1 (ավելացված է ի կատարած բառը) և ՀԳ 1, ՀԵ 1-ի կատարած սաղմու յԱսափ փխ իմաստութիւն յԱսափ (ՀԴ 1, ՀԵ 1, ՀԶ 1 և այլ բամբուճերից):

Մայր հայրենիքում



ՄԱԾՏՈՑՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՆՈՐ ԴԱՓՆԵԿԻՐԸ

(Հայագետ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյան)

1974 թ. հունիսի 19-ին Օշականի և Մեսրոպ Մաշտոցի անունը կրող դպրոցի բակում Հայկական ՍՍՀ Մինիստրների տվյալն կողմից հայագիտական առավել աչքի ընկնող աշխատությունների համար սահմանված Մաշտոցյան մրցանակը Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի կողմից հանձնվեց բազմավաստակ պատմաբան և աղբյուրագետ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանին:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1800-ամյակի առթիվ սահմանված մրցանակի երկրորդ դափնենիրը դարձավ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հայ ժողովրդի միջն դարերի պատմության բաժնի վարիչ դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանը՝ հայագիտության վերջին տարիների մեծագույն նվաճումներից մեկը հանդիսացող իր «Կանոնագիրը հայոց» երկիրատոր արժեքավոր աշխատահրության համար: Տարիներ առաջ նոյն մըրցանակի առաջին դափնենիրն էր դարձել Մատենադարանի տնօրեն, ականավոր ձեռագրագետ, պատմաբան-բանասեր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանն իր կազմած բազմահատոր հայերեն ձեռագրերի հիշատակարանների կոթողային գործի համար:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաց ընթերցարակում միշտ կարելի է տեսնել իր մնացուն անկյունն ունեցող, շղուս դնեմքով ու պրպտող աչքերով, համար ու տքնաշան աշխատող, միշտ երիտասարդ ու միշտ որոնող հայագետին՝ Վազգեն Հակոբյանին:

Նրա կյանքի ուրախության աղբյուրը հայ ձեռագրերի աշխարհն է և հրանցում կատարած իր աղբյուրագիտական հայտնաբերությունները: Եվ իսկապես ինչքա՞ն մեծ թիվ են կազմում մեր միջնադարյան այն սկզբնաբյուրները, որոնք, շնորհիվ Վազգեն Հակոբյանի աշխատանքների, դորս եկան մոռացությունից և պատշաճ բնագրագիտական համեմատություններով ու ճշգրտություններով և արժեքավորություններով իսպանացին հայագիտությանը:

Վազգեն Արտաշեսի Հակոբյանը ծնվել է 1913 թ. փետրվարի 14-ին Հայաստանի այժմյան Ղուկասյանի շրջանի Չոռի (այժմ՝ Լեռնացյուղ) գյուղում: Իր նախնիները գաղթել էին Բաւենից: Վազգենը փոքրորոց իր գրուասիրությունը ժառանգեց պապից՝ ու Հակոբ քահանայից, և մորից՝ Մագրաղից, որոնք օժտված են եղել բացառիկ ուսումնական ու հայրենասիրությամբ: Ապագա հայագետը հազիվ 7 տարեկան էր, երբ 1920 թ. պատերազմների ընթացքում որբացավ իր հորից և պապից, որոնք զոհ դարձան բորբական ներխուժմանը: Սակայն ուսման ծարավի մանուկը, իր վերածնվող հայրենիքում, հնարավորություն ունեցավ ավարտելու Լենինականի Մոավյանի անվան մանկավարժական տեխնիկումը և ապա կարճ ընդմիջումից հետո, 1936 թ., ընդունվելու Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն ավարտեց 1941 թ. գերազանցության դիպլոմով: Նա ուսանող էր, երբ ձեռնամուխ է լինում գիտա-թեստագուտական աշխատանքի և

1941 թ., առաջին անգամ լինելով, տպագրում իր առաջին գիտական ընդարձակ ուսումնամասի բոլոր հայոց աշխատավայրերունը՝ (հեղինակակցությամբ Հ. Ութմազյանի), նվիրված 18-րդ դարի հայ ազգատպարական շարժման կենտրոններին

պետական համալսարանում հայ ժողովրդի պատմության գծով, և առացավ հայագիտական խնամված պատրաստություն մեծանուն հայագետ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի շնչի տակ:



Դոկտ.-պրոֆ. Վազգեն Հակոբյանն աշխատելիս

և նրանց ծրագրերին¹: Հակոբյանն ապա անցել է մանկավարժական աշխատանքի Մեծ Ծահիրիար գյուղի դպրոցում իրու տնօրեն և պատմության ուսուցիչ:

1942 թ. Հայրենական մեծ պատերազմի օրերին Հակոբյանը զորակոչվել է բանակ, որ վիրավորվելով հետո՝ զորացովել է: 1943—1957 թթ., շուրջ 14 տարի, Հակոբյանը դարձավ զբաղվել է մանկավարժությամբ՝ իրու պատմության ուսուցիչ Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցում:

Հակոբյանն իր մանկավարժական աշխատանքներին զուգահետո 1944—1947 թթ. կարողացավ դառնալ ասպիրանտ Երևանի

Հայագետ Հակոբյանի համար հատկապես շատ արգասաքեր եղան Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում անցկացրած տարիները, որը նա աշխատում է սկսած 1947 թ. ապրիլից առ այսօր: Այսուեղ է, որ նա իր բացառիկ ջանահարությամբ խորացալ ու հմտացավ գիտա-հետազոտական աշխատանքների մեջ և ապրեց իր միանգամայն ուսանելի շեշտակի վերելքը: Նա 1948 թ. փայլուն կերպով պաշտպանեց իր թեկնածուական պարտաճառը՝ նվիրված «Արհստոտեկին վերագրված «Յաղագու աշխարհի» աշխատության հայկական թարգմանության ընդարձակ բնագրին և հայկական մեկնություններին»: 1951 թ. Հակոբյանը ստացավ նաև ավագ գիտական աշխատողի պատվավոր կոչում: Բացառիկ խստապահանջնության և համեստության տեր գիտնականը, որ արդեն իսկ ճանաչված դեմք էր հայագիտության մեջ իր հեղինակած մենագրական հատորներով և գիտական բազմաթիվ հոդվածներով, մի-

¹ Հ. Ութմազյան և Վ. Հակոբյան, Հայ ազգատպարական գաղափարների երկու կենտրոն և երկու ծրագիր XVIII դարի երկրորդ կեսին, Երևանի պետ. համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», № 3, 1941, էջ 71—161:

այն 1967 թ. համեստ եկալ իր դոկտորական ավարտածանի պաշտպանությամբ, որը նըւիրված էր «Կանոնագիրք հայոց»-ը և նրա խմբագրությունները՝ թեմային:

1974 թ. հունիսի 18-ին Օշականում Վ. Հակոբյանին շնորհվեց հայագիտության բարձրագույն պարգևը՝ Մաշտոցյան մրցանակը...

Վազգեն Հակոբյանը 1971 թ. նոյեմբերից սկսած առ այսօր դեկանարում է Պատմության ինստիտուտի հայ ժողովրդի միջին դարերի պատմության բաժինը և իր կարևոր մասնակցությունն է քերում հայագիտական նոր ուժերի պատրաստման շնորհակալ գործին: Նա միաժամանակ 1969—1974 թթ. դասախոսել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի տարեկան ֆակուլտետներում: 1972 թ. սեպտեմբերին Հակոբյանը շնորհվեց պրոֆեսորի կոչում: Նա ընտրվել է նաև Պատմության ինստիտուտի, ինչպես նաև պետական համալսարանի հայագիտական կենտրոնի գիտական խորհուրդների անդամ:

Վազգեն Հակոբյանի գիտական առաջին խոշոր հմանումը պատմական արժեքի մասն ժամանակագրությունների և տարեգրությունների երկու ծավալուն հատորների պատրաստումն ու հրատարակումն էր: Նրանք լույս տեսան Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրատարակությամբ, իբրև «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարի երրորդ և յոթերրորդ հատորներ 1951 և 1956 թթ.՝ «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» խորագրով: Այս հատորներն ընդգրկում են 1151 էջ (455+XI+685): Հիշյալ երկու ստվար հատորներում ի հայտ են եկեղեց 85 մեծ և փոքր ժամանակագրություններ և տարեգրություններ, որոնցից 55-ը առաջին անգամ ուսումնասիրվել և հրատարակվել են Հակոբյանի ջանքերով, 5-ը՝ հրատարակվել են նորահայտ բնագրերի հիման վրա և կամ մի քանի այլ տարբերակների միջոցով, իսկ մնացյալ բնագրերն ել ճշգրտվել և լրացվել են: Աշխատահրովը հիշյալ հատորների պատրաստման համար ոչ միայն չի գործադրել Մաշտոցյան Մատենադարանի հազարավոր ձեռագիր գանձերի զըննումով, այլև նոր որոնումներ է կատարել նաև Սովորականի Լենինի անվան, Լենինգրադի Սալտիկով-Շչերինի անվան գրադարաններում և Արևելագետների ինստիտուտում, ինչպես նաև Բարի և Թրիխի թանգարաններում:

Երկու հատորներն էլ վերջում ունեն օտար բաների բարարան, աշխարհագրական անունների, անձնանունների և առարկայական ցանկեր:

Վազգեն Հակոբյանի «Մանր ժամանակա-

գրություններ XIII—XVIII դդ.» երկնատոր գործի մասին գնահատանքի տողեր են հրատարակել Լուս Մելիքսեփ-Բելը, Վ. Ուկանյանը, Էմ. Պիվազյանը և հ. Ներսես Ակիմյանը:

Սուած դադարի մեղվածանորեն աշխատող հայագետը 1964 թ. շատ ավելի մեծ մի հայթանակ արձանագրեց իր գիտական կյանքում, որևէ ինչպես երևանում, այնպես էլ արտասահմանում համարվեց հայ աղբյուրագիտության ամենախոշը նվաճումներից մեջը: Հակոբյանի այդ միարակար «Կանոնագիրք հայոց»-ի առաջին հատորի լույս ընծայումն էր՝ բաղկացած 822 էջից կամ մետրականից 60 մամուլից, որը աղյունը էր տասնամյա տիտանական աշխատանքի: Ցոյտ տարի անց, 1971 թ., հրապարակ հանեց նաև նոյն «Կանոնագիրք հայոց»-ի Բ հատորը՝ բաղկացած շուրջ 600 էջից:

«Կանոնագիրք հայոց»-ը հայ ժողովրդի հրավարանական մտքի հնագույն հուշարձաններ է, կանոնների մի ժողովածու, որը, սկիզբ առնելով VIII դարից, շարունակել է իր գոյությունը, մինչև XX դարի սկզբները: Երկար դարեր հայ եկեղեցական այլ ժողովների կողմից սահմանված կանոններն օրենքի ուժ են ունեցել և հոգևորականության, և՝ բովանդակ ժողովրդի համար: Այդ կանոններում պարփակված են հայ վաս միջնադարի հասարակության ամբողջ կյանքը իր բոլոր ծավալերով: Հատկապես հայ պետականության վերացումից հետո, օտար բոնականների տիրապետության օրոք, ինչպես նաև հայ գաղտավարերում հրանք անգնահատելի դեր են խաղացել ազգային սովորությունների պահպանման և ազգային ինքնանական մտքներում: Հետևաբար «Կանոնագիրք հայոց»-ը մի տեսակ վահան է հանդիսացել օտարացման և ձուլման դեմ: Այն անգնահատելի աղբյուր է ոչ միայն հայ միջնադարյան պատմության, այլ նաև հրավարանության, փիլիսոփայության, լեզվաբանության, բնական գիտությունների, ճարտասանության, ազգագրության, բժշկության, բարեկանության, ժողովրդի կյանքի ու կենցաղի և այլ հարցերի ու խնդիրների վերաբերյալ: Նա միաժամանակ հակառական նյութ է բովանդակում հայերի և այլ ժողովրդների միջև գոյություն ունեցող մշակութային կապերի, ինչպես նաև հրանց միջև գոյություն ունեցող մերժին հակասությունների և այլ հարցերի վերաբերյալ: Հայկական կանոնների ուսումնասիրությունը կարեւոր է նաև այն տեսակետից, որ նրանք հանդիսանում են Սովորական Միության ժողովուրդների հրավագիտական մտքի համարույն սկզբանադրյուրը, որի գիտական

արժեքը դուրս է գտնիս ազգակին շրջանակ-ներից»²:

Մինչև Վ. Հակոբյանը, որիշներն էլ են գրադիւն «Կանոնագիրք հայոց»-ի բնագրի հրատարակման և ուսումնասիրման հարցերով, սակայն ոչ որի չի հաջողվել հայագիտությանը պարզել երա գիտական-քննական ամբողջական բնագիրը: Վ. Հակոբյանը մեն-մենակ լծվեց մի աշխատանքի, որն առանց չափազանցության կարելի էր համարել մի խումբ գիտականների գործ: Նա ոչ միայն կատարեց Մաշտոցյան Մատենադարանում պահպող շուրջ 200 «Կանոնագիրք հայոց»-ի ձեռագիր օրինակները մանրակըրկիտ կերպով գննելու հոգաւանաշ աշխատանքը, այլև վերջիններից առանձնացրեց իր կողմից ընտիր համարված 47 գրչագրեր (ընդորինակված XIII—XIX դդ.) տարբնիքոցվածքների համար, իսկ իրը բնագրի հիմք ընդունեց աշխարհում մեզ հասած «Կանոնագիրք հայոց»-ի հնագույն օրինակի մանրալուսանեկարները: Այդ գրչագիրը պահպում է Պարսկաստանի Նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի մատենադարանում (№ 131) և գրված է մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով Հովհաննես գրչի կողմից Կիլիկիայում 1098 թ.: Վ. Հակոբյանը միաժամանակ Կանոնագրքի թարգմանական կանոնները համեմատել է հունարեն բնագրերի հետ և մի առ մի նշել երանց տարբերությունները: Վ. Հակոբյանն իր առաջ խնդիր էր դրել ոչ միայն կազմել «Կանոնագիրք հայոց»-ի գիտական համեմատական բնագիրը, այլև միաժամանակ հայտնաբերել Հովհան Օձնեցի կաթողիկոսի կողմից VIII դարում կազմված ժողովածուն և երանից անջատել հետագա դարերում ավելացված բոլոր կանոնները:

Եվ ահա շնորհիկ Վ. Հակոբյանի ավելի
քան 15 տարիների սրտամաշ և հնիին աշ-
խատանքների, հայագիտությունը, առաջին
անգամ լինելով, կարողացավ ունենալ «Կա-
նոնագիրը հայոց»-ի քննական բնագիրը,
որը մարզվեց դարերի ընթացքում ստեղծ-
ված «Կանոնագիրը հայոց»-ի բազմաթիվ
տարատեսակներից, և կանոնագիրը միա-
ժամանակ վերստացավ Հովհանն Օճենցու
ճշգրտված ժողովածոյն նախնական ձևը:
Վ. Հակոբյանը Ս. Բատորի իր առաջարա-
նում արժանին է մատուցել իր միջոցով Ել-
ավելի արժեքավորված հեղինակի՝ Հովհանն
Օճենցի կաթողիկոսի, հայ մեծ երախտավոր-
ութիւն կանունի:

«Կանոնագիրը հայցոց»-ի Բ հատորը կազմված է Վ. Հակոբյանի կը առաջ խնդիր էր դրել՝ քացահայտել Հովհանն Օձեցու կողմից

կազմված կանոնագրքում X—XI դր. ընթացքում կատարված հավելումները, ի մի բերել դրանք, կազմել նաև վերջիններիս գիտա-համեմատական բնագիրը, ենթարկել ուսումնասիրության և ծանոթագրել: Այս հատորի համար ևս Վ. Հակոբյանն իր օգտագործած 50 ձեռագրերից բացի ծանոթագրությունների համար զննել է 15 գրչագրեր և, իսկ իր հոր ներածության և ծանոթագրությունների համար օգտագործել է այլ 49 ձեռագրեր ևս, ինչպես նաև արտասահմանյան գրչագրերի մանրապատճեններ:

Ինչպես Ս. այնպես էլ Բ հատորների վերջում իբրև հավելված լույս են ընծավակե զանազան կանոնների հնագույն մագաղաթյա պատարիկ-պահպանակներ: Բացի կցված ծանոթագրություններից, որոնցից լուրաքանչյուրն արժանի է առանձին ուսումնասիրության, երկու հատորներն էլ վերշուն օժտված են կանոնախմբերի առաջարանների, վերշարանների և հոդվածների սկզբանատողների, ինչպես նաև առարկայական, անձնանունների և տեղանունների ցանկերով: Եթե Ս. հատորում տեղ են գրավել 24 կանոնախմբեր, ապա Բ հատորում մոտք են գործել հետագայում ավելացված, սակայն միջնադարում դարձյալ օրենքի ուժ ունեցող 33 կանոնախմբեր: Երկու հատորներն էլ խըսրագրվել են բանասերներ Հ. Անայանի և Էմ. Պիվազյանի կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ քիչ անգամ է պատահել, որ մեր աղբյուրագետ մշակներն այնպիսի համընդհանուր բարձր գնահատանքի են արժանացել, ինչպես այդ կատարվեց Վ. Հակոբյանի նկատմամբ։ Հայաստանում ու Մովկվայում, Կ. Պոլսում և Երևանում ու մինչև իսկ ԱՄՆ-ում լուստեսան մեծ թվով դրվագալից գրախոսություններ՝ ստորագրված հայագիտության ճանաչված դեմքերի կողմից, որոնք վեր հանեցին կատարված գործի արժեքն ու մեծությունը։ «Կանոնագիրք հայոց»-ի մասին Երևանում և Մովկվայում հայերեն և ռուսերեն լեզուներով գրախոսություններով հանդես եկան Սուրեն Արևշատյանը³, Ասատոր Մնացականյանը⁴, Մուշեղ Նարյանը⁵, Լևոն Խաչերյանը՝ երկու անգամ⁶, Բ. Ովորարյա-

³ «Էշմիածին», 1966, № 5, էջ 51—56: Տես նաև «Сов. государства и права», Москва, 1965, № 6.

«Գրական թերթ», 1965, հունիսի 25, № 26 (1282):

⁵ «Սպիտական Հայաստան», օրաթերթ, 1965, հունիսի 9, № 134(13479): Տես նաև Անդրեասյան «Բարեկամության առաջնային գործառնությունները» (1965) և այլ աշխատքները:

⁶ «Պատմա-քանակիրական հանդես», 1972, № 4:

(59), էջ 249—256 և «Սովետական Հայաստան», օ-
րաթերթ, 1972, հունիսի 2:

² Ա. Արևշատյան, «Էջմիածին», 1966, № 5, էջ 51:

առ՝ և որիշներ, իսկ ափբուքում՝ բազմավաստակ ամերիկահայ բանասեր Հարություն Քյուրիյանը⁵, Կ. Պոլսում՝ Գուրգեն Տեր-Վարդանյանը⁶ և որիշներ: Հեղինակը այս առիջիկ ստացել է նաև շնորհավորական բազմաթիվ համակներ արտասահմանյան հայ և օտար հայագետներ Հ. Պ. Ութթիեկից և Ֆրա Ս. Ռընուից (Ֆրանչիա), պրոֆ. Ժերար Գարիտից (Ֆելդիա), դոկտ. Էդ. Շուցից (Հունգարիա) և որիշներից, որոնք իրենց մեծ գործունակությունն են հայտնել նման գործով հայ աղբյուրագիտությունը հարս-տանալու առթիվ:

Սակայն Վ. Հակոբյանի երկասիրությունները չեն ավարտվում վերոհիշյալներով: Նա նետազոտողներից մեկն է եղել հայ-ուստական դարավոր բարեկամությունը արտացոլող անհամար վավերագրերի: Նա իր մասնակցությունն է բերել հանգույցալ պատմաբան Պ. Հարությունյանի և Ս. Սվակիմովայի մետ միասին «XVIII դարի վերաբերյալ հայ-ուստակամարությունների պատմությանը նվիրված երկաստոր փաստաթյուրի ժողովածու»-ներին, որոնք լույս տեսան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հրատարակությամբ 1964 և 1967 թթ.⁷ Իրեն այդ շարքի Բ հաստիք¹⁰ Ա. և Բ¹¹ մասներ, ակադ. Աշոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ և առաջարանով: Երկու հաստոր միասին ընդգրկում է 820 էջ: Հաստորներում հայագիւած փաստաթյուրը տարիների ընթացքում հայտնաբերվել և վերանայվել են Մուսկվայի զանազան արխիվներից:

Մերուա Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոդվածների ժողովածուն¹²

⁷ «Գրական թերթ», 1978, մարտի 2, № 10 (1881):

⁸ «Սիրն», Երևանական, 1968, հունիս, էջ 385—387:

⁹ «Մարտնարա», Կ. Պոլսու, 1987, հունիսի 2:

¹⁰ Արմանո-ռուսские отношения в первой трети XVIII века. Сборник документов, том II, часть I, под редакцией Ашота Иоаннисяна, изд-во Академии наук Армянской ССР, Ереван, 1964.

¹¹ Արմանо-ռուսские отношения в первой трети XVIII века. Сборник документов, том II, часть II, под редакцией Ашота Иоаннисяна, изд-во Академии наук Армянской ССР, Ереван, 1967.

¹² Մերուա Մաշտոց, հոդվածների ժողովածու, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիա, Պատմության ինստիտուտ, խմբագրությամբ Աշոտ Հովհաննիսյանի ժողովածուն հրատարակության պատրաստեցին, առաջարանը և անհրաժեշտ ծանոթագրությունները գրեցին Վ. Ա. Հակոբյանը, Հ. Ս. Անասյանը և Հ. Մ. Բարթիկյանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատակություն, Երևան, 1982:

ևս, որ լույս տեսավ 1962 թ., կազմվել էր դարձյալ Վ. Հակոբյանի կողմից՝ գործակցությամբ Հ. Անասյանի և Հր. Բարթիկյանի:

Վերջերս Վ. Հակոբյանը, հեղինակակցությամբ պատմական գիտությունների դոկտոր Լ. Բարյանը, լույս ընծայեց նաև իր ուսուցիչն՝ հայագիտության մեծ երախտավոր ակադ. Հակոբ Մանանդյանին նվիրված մի մենագրություն:¹³ Այդ էլ ստացին լուրջ աշխատությունն է՝ նվիրված բազմավաստակ մեծ գիտնականի կյանքին ու գիտամանկավարժական գործունեությանը: Մանանդյանի երախտագետ աշակերտ Վ. Հակոբյանը վերջին տարիներին մի քանի հոդվածներով անդրադարձել էր իր մեծ ուսուցիչ կյանքին ու գործունեությանը¹⁴, ¹⁵, ¹⁶:

Վերջերս հրապարակ ենավ վաստակաշատ հայագետի շորջ 900 էջանոց մեկ նոր ստվարածավալ գործը. «Հայերեն ձեռագրերի ԺԷ» դարի հիշատակարանների (1601—1620 թթ.)» Ա. հաստորը, որ նա իրուս հեղինակալից հանդեռ է գալիս հանգույցալ ակադ. Աշոտ Հովհաննիսյանի մետ: Այս գործը, որ ակադ. Լ. Ս. Խաչիկյանի ԺԴ և ԺԵ դարերի ձեռագիր հիշատակարանների բառահատոր ժողովածուների սկզբունքով է կազմված, ինչպես նշված է ստացարանում, «Տարիներ առաջ սկսել էր ակադ. Աշոտ Հովհաննիսյանը և կիսատ թողել»: Որքան մեզ հայունի է, հանգույցալ ակադեմիկոս հիշատակարանները հավաքել էր ոչ ամբողջությամբ, այլ ընտրովի ձևով և կրճատումներով: Վ. Հակոբյանը աշխատանքը ամբողջացրել է իր հիմքից և հասցեկու է այն իր ավարտին: Այն բաղկացած է լինելու հինգ հատորներից, և որոնք, սկսած այդ ժողովածուի Բ հաստորի մեծ մասից մինչև 1700 թ., իր տքնաշան ու միայնակ աշխատանքի արդյունք է լինելու: Այս հաստորի հիմնական նյութերը քաղված են Մաշտոց Մատենադարանի հարուստ ձեռագրերից, ինչպես նաև տպագիր ու անտիք ձեռագրացակներից, մամուկից, գիտական հանդեններից, առանձին աշխատություններից, լենինգրադից, Երևանի միջազգային գրադարանից, Վենետիկից և այլ վայերներից ստացված ստանձին մահրալուսանկարներից: Ա. հաստորը միայն ընդգրկում է 1041 հիշատակարան: Գիրքը ունի առաջարան (Ա.—ԻԶ), ցանկ ստվար հա-

¹³ Լ. Բարյան և Վ. Հակոբյան, Ակադեմիկոս Հակոբյանը, Մանանդյանը, Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, 1974:

¹⁴ «Բաներ Երևանի համալսարանի», 1970, № 3, էջ 57—74:

¹⁵ Նոյն տեղում, 1972, № 3, էջ 158—162:

¹⁶ ՀՍՍՀ ԳԱ «Երաբեր» հասարակական գիտությունների, 1973, № 11, էջ 12—20:

տորի համար օգտագործված աղբյուրների (Խէ—ԼԱ), 1601—1620 թթ. ձեռագրերի հիշատակարանները (էջ 1—755), ժամանակարական օճանդակ ցանկեր (757—758), օտար բառերի բառարան, ցանկեր անձնանունների, տեղանունների, առարկալական և այլն (759—827): Պարզ է, որ ներկա հաստորի և նրա բաղկացոցիշ մասերը կազմող հիշատագ մրցու չորս հատորների լույսը հնայիմը անսպաս գանձ է հանդիսանալու հայագիտությամբ գրաղվող մասնագետների համար:

Ուսումնասիրողն ուսանելի շատ բան կարող է գտնել նաև Վ. Հակոբյանի թեկուց փոքրածավալ հոդվածներում, քանի որ հրանք ևս ձեռագրագիտական և պատմաբանասիրական արժեք են ներկայացնում: Նման բնույթի հոդված-հրապարակումներից է «Հեթուս պատմիչի նորահայու հիշատակարանը և նրա պատմական նշանակությունը»¹⁷, «Անանուն ժամանակագրության աղբյուրների մասին կամ Վարդան Արևելցու «Պատմութիւն Տիեզերական»-ի համարու խմբագրությունը»¹⁸ հոդվածները: Ուշադրության արժանի կարևոր հոդված-հրապարակում է նաև Վ. Հակոբյանի «Մարտիրոս Երգոնկացու ճանապարհորդական նորերը (XV դար)»¹⁹: Այսուղեւ նկարագրված է նայ ճանապարհորդի ուղևորությունը, որ սկսած 1489 թ. մինչև 1496 թ. եղել է նվորապական բազմապարհորդական նորերը (XV դար): Այսուղեւ նկարագրված է նայ ճանապարհորդի ուղևորությունը, որ սկսած 1489 թ. մինչև 1496 թ. եղել է նվորապական բազմապարհորդական և կանա առել Աւտանատյան օվկիանոսի ափին: Բացի հուշարձաններից նաև նկարագրել է նաև իր տեսածքաբներն ու բնակչներին: Ձեռագրական բնույթի հոդվածներից են նաև նրա «Ժամանակագրական մի փաստի ճշտման շուրջը»²⁰ և «Մաշտոցի անվան Մատենադարարանի № 1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջը»²¹ աշխատությունները: Դարձալ նայ ժողովորդի պատմության հետ է սունչվում Վ. Հակոբյանի «Աշոտի՝ Բագրատունաց առաջին թագավորի գահակալության թվականը»²² հոդվածը:

Ուշագրավ է նաև նրա «Մատենագիտական տեղեկություններ բուսերի սեղկցիալի

պատմության վերաբերյալ»²³ հոդվածը, որը ոչ միայն կարևոր է նայ այգեգործության և ընդհանրապես բուսաբանության պատմության համար, այլև ունի գործնական նըղանակություն:

Վ. Հակոբյանը շանացել է նաև հայկական աղբյուրներն ի սպաս դնել սովորական տարրեր ժողովորդների պատմության ամբողջացման համար: Խնչվես իր ուսումնասիրած ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ մասն ժամանակագրություններում նա ուշագրավ տվյալներ է գրտել ուսուների ուկրաինացիների և վրացիների անցրած պատմության վերաբերյալ,^{24, 25, 26, 27, 28}:

Վ. Հակոբյանի գիտական վաստակում բավականին կարևոր թիվ են կազմում նաև նրա գրախոսությունները, որոնցից կարևոր մեկ մասը ուսումնասիրական բնույթի են:

Մեծ շանասիրության տեր գիտականի վաստակում դեռևս գտնվում են նաև մի շարք անտիպ աշխատություններ: Անտիպ-ների շարքում բացադրիկ արժեք է ներկայացնում Վ. Հակոբյանի «Արիստոտելին վերագրած «Յաղագ աշխարհի» աշխատության հայ թարգմանության նեղարձակ բնագիրը և այդ աշխատության հայկական մեկնությունները», որը միաժամանակ հանդիսացել է հեղինակի թեկնածուական ավարտաճարը:

Տպագրության համար պատրաստ գործերի շարքում են նաև **Ժ:** դարի ձեռագիր հիշատակարանների ստվար 2-րդ և 3-րդ հատորները: Աշխատանքի ընթացքում են նաև «Կանոնագիրը հայոց»-ի դուրս մնացած կանոնական բեկորների ժողովածուն, «Մանր ժամանակագրություններ»-ի 3-րդ հատորը, ինչպես նաև պատմական սկզբունալրյուրների երկու այլ ժողովածուներ, «Հայ միջնադարյան ճանապարհորդների նորագրությունները» և «Միջնադարյան փոքր պատմություններ ԺԵ—ԺԸ դդ.» և այլ գործերը:

Վազգեն Հակոբյանը կատարել է նաև բեկոնավոր խմբագրական աշխատանքներ:

Խնչվես «Կանոնագիրը հայոց»-ի վրա կատարած նրա աշխատանքները, այնպես

¹⁷ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1948, № 10, էջ 68—74:

¹⁸ Նոյն տեղում, 1949, № 7, էջ 51—62:

¹⁹ Նոյն տեղում, 1957, № 6, էջ 97—110:

²⁰ ՀՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտությունների, 1974, № 5, էջ 78—81:

²¹ Էջում նայ ժողովորդի պատմության և բանասիրության, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1971, էջ 137—150:

²² «Revue des Etudes Arméniennes», Paris, nouv. serie, t. II, 1965, p. 273—282.

²³ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1949, № 8, էջ 76—77:

²⁴ Նոյն տեղում, 1963, № 2, էջ 45—52:

²⁵ Сборник «Истор. связи и дружбы украинского и армянского народов», Киев, 1965, т. 2, стр. 69—76.

²⁶ Նոյն տեղում, Ереван, 1961, т. I, էջ 210—228:

²⁷ «Տեղեկագիր», Հայկ. ՍՍՀ ԳԱ հաս. գիտությունների, 1964, № 3, էջ 61—70:


²⁸ Նոյն տեղում, 1950, № 6, էջ 93—98:

Էլ նրա մյուս հայագիտական գործերը եղել են Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ուշադրության կենտրոնում: Վեհափառ Հայրապետի բարձր հոգատարության ընթացքի է, որ նոր Զուլայի Ամենափրկիչ վանքի Մատենադարանից ստացվեց «Հայոց կանոնագիրք» ձեռագրի լուսավարմերը, մակրածավալեները, որոնք ել աշխատանքը ավարտելոց մետք Հակոբյանը նվիրել է Մատենադարանին: Այդ ձեռագիրը, ինչպես Եղեցինք, աշխարհում մեզ հասած հնագույն օրինակն է «Կանոնագիրք հայոց»-ի և գրված է մարտովաճ ուղղագիծ երկարագրով 1098 թ. և այն հիմք ծառայեց Վ. Հակոբյանի կողմից պատրաստված գիտական բնագրին: Վեհափառ Հայրապետը 1962 թ. ՀՀմանական գումարված ազգային եկեղեցական ժողովում, որ բնարկվում էր «Հայ եկեղեցու Սահմանադրության» (Կանոնադրության) մշակման հարցը», իր արտասահմած եզրափակիչ խոսքում անդրադարձակ «Կանոնագիրք հայոց»-ին և հավատեց, որ հրա բնագրի կազմման և ուսունասիրման գործերով է զբաղվում պատմարան Վ. Հակոբյանը: Վեհափառ Հայրապետի կողմից դեպի Վ. Հակոբյանի գիտական

աշխատանքները ցուցաբերված բարձր վերաբերմունքի լավագույն գրավականն է համեմիսանում վերջերս Նորին Սրբութքան կողմից տրված գնահատանքի ու օրինության գիրը, որով բարձր է գնահատում հայագիտությանը նրա մատուցած ծառայությունները, շնորհավորում Մաշտոցյան մըրցանակի դափնեկիր դատավոր առջիկ և մաղթում նորանոր հաջողություններ («ՀՀմանական», 1974, № ԺԲ, էջ 3):

Մոտավոր գծերով այս է Մաշտոցյան մըրցանակի դափնեկիր, բազմավաստակ հայագետ, համեստ ու աշխատող, պատմաբան և աղբյուրագետ, պատմական գիտությունների դոկտ.-արտֆ. Վազգեն Հակոբյանի կյանքի անցած ողին: Աղմուկից հետո, նա իր գիտական-ստեղծագործական ծաղկման շրջանն է ապրում: Հայագիտությունը դեռևս շատ ու շատ սպասելիքներ ունի իր հավատարիմ նվիրյալից: Երկար ու առողջ բազում տարիներ և հաջողություններ անելովն հայագետին, որպեսզի նա իր նորանոր բարձրարժեք երկերով էլ ավելի հարստացնի հայագիտության գանձարանը՝ ի փառս հայ մշակույթի և գիտության:

ՍՈՒՐԵՆ ՔՈՂԱՆՉՅԱՆ





ՍՈՒՐԵՆ ԱՎՀՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԸ

Լրացավ վրահայոց թեմի թեմական խորհրդի ատենապէտ Սուրեն Ավշյանի ծննդյան 70-ամյակը:

Սուրեն Ավշյանը Վրաստանի գրողների սիոնիզման հայկական մասնաճյուղի նին անդամներից է: Նա մեծ ավանդ ունի հայ և վրաց ժողովորդների գրական կապերի ամրագնդման և Թբիլիսիի Սու. Շահումյանի անվան թատրոնի կենսունակության գործում:

Հորենյարը հանդիսանում է Վրաստանի հայ ականավոր գրող-քանաստեղծ-թատերագիր-թարգմանիչներից մեկը:

Ս. Ավշյանը ծնվել է 1904 թ. Թբիլիսիում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցներից մեկում՝ Հակոբ Աղաբարի, Աթարեկ Խնկոյանի և որիշների շնչի տակ:

Դեռ դպրոցական տարիներից նա սկսել է գրել քանաստեղծություններ, որոնցից մի քանիսը առաջին անգամ տպագրվել են 1923 թ. «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրում: Առանձնապես հաջող են նրա լիրիկական գործերը, որոնցից մի քանիսը երգերի են վերածվել և լայն տարածում գտել ժողովրդի մեջ:

1924 թ. սկսած Ավշյանն իր մասնակցությունն է բերել վրացահայ թատրոնի ստեղծման և կազմակերպման գործին: Հանդիսականների շերմ սիրուն են արժանացել նրա «Սոս և Վարդիթեր», «Քյոր օղի», «Սայաթ Նովա», «Պըլը Պուդի» և մյուս պիեսները: Թատերական արվեստի զարգացմանը մատուցած ակնառու ծառայությունների համար Վրաստանի կառավարությունը նրան շնորհել է հանրապետության արվեստի վաստակավոր գործի պատվավոր կոչում:

Ավշյանի գրական-հասարակական գործունեության ամենաբեղմնավոր հատվածը

հայ և վրաց ժողովորդների քարեկամության, գրական կապերի ամրապնդման գործում նրա կատարած քրտնաշան աշխատանքն է: Կես դարից ավելի նա ծառայում է այդ նպատակին՝ հայերենից վրացերեն և



վրացերենից հայերեն թարգմանելով դասական ու ժամանակակից հեղինակների քազմաթիվ գործեր: Նրա գրչին են պատկանում, օրինակ, Ս. Շանշիաշվիլու «Արսեն» և «Խնկոյանի Գոշա» (ըստ Ալ. Ղազ-


բեգի), Ս. Կլիխաշվիլու «Հերոսների սերունդ», Գ. Բասազովի «Եցկա Ռիժինաշվիլի», Գ. Նախուցրիշվիլու և Բ. Կանդելակիի «Նացարքերիա», Կ. Բուաշհձերի «Նորքը ապրում ներ», Մ. Մրկվիշվիլու, Ա. Ավշիլավայի, Մ. Բարաթաշվիլու, Գ. Զափարիձերի, Զ. Անտոնովի, Մ. Կիկվիձերի, Ա. Ցագարելու պիեսների, Վ. Դոլիձերի «Հեթը և Կոտե», Օ. Թաքրարիշվիլու «Մինդիա» օպերաների լիբրետոների (Հովհ. Ագուլյանի համահետինակությամբ), Կ. Գամախուրդիայի «Առաջնորդը» և «Վարպետաց վարպետի աշը», Ի. Լիսաշվիլու «Կեցիսնվելի» վեպերի թարգմանությունը հայերեն, ինչպես նաև Հովհ. Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի, Ալ. Ծիրվանզադեի «Քառոս» վեպի, Լ. Միքայելյանի «Գոշ» պիեսի և բազմաթիվ այլ հեղինակների արձակ, չափածու ու դրամատիկական երկերի թարգմանությունները լրացերեն:


Նրա գրչին են պատկանում «Հայ-վրացական թատերական փոխարարերություններ» (վրացերեն և հայերեն առանձին-առանձին), «Վրաց գրականությունը հայերեն», «Թրիխին և հայ գրականությունն ու մամուլը», «Իլիա Շավճավաձեն և հայ հա-

սարակությունը», «Հայկական թատրոնը Թրիխինում», «Ավետիք Խասիակյան», «Խաչատոր Արովյան», «Նիկո Բարաթաշվիլին և հայ գրականությունը» և բազմաթիվ այլ հոդվածներ, ուստմնասիրություններ:

Հորելյարը երկար տարիներ, որպես վաստակվող ատենապետ, վրահայոց թեմական խորհրդին և միաժամանակ Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի հայրենասիրակյան և խաղաղասիրակյան 20-ամյա գործունեությանը բերել է իր սրտագին մասնակցությունը՝ արժանապետ Նորին Սրբության օրինությանը և գևահատաճրին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, շերտորեն շընորհավորում է Վրահայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ, վաստակաշատ և հայրենասեր գրող-թատերագիր-թարգմանիչ, հայ և վրաց ժողովորդների բարեկամության և մշակութային կապերի սերտացման անխոնջ մշակ Սուրեն Ավշյանին՝ իր ծննդյան 70-ամյա հորելյանի առթիվ, և մաղյում նրան ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի փառ հայ մշակույթի:





ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՉԵՌԱԳՐԵՐԻ*

№ 381
ԱԼԵՍԱՐԱՆ
(Հայերն և հայտառ տաճկերն)

Թերթերը՝ 319 (թ. 141Ա.+318):—Պրակեները՝ 27, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԱ՝ 8, ԺԲ և ԺԸ՝ 10, երեք թերթ էլ ձեռագրի սկզբում կա:—Մեծությունը՝ $22,5 \times 16,5 \times 4,4$ սմ:—Նյութը՝ դեղնած դիմացկուն բույլ:—Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճեղումով ուկիգովով զարդիք և երկու խաչ կա:—Պահպանակները՝ սկզբում կա մի թերթ գունավոր բույլ:—Կիճակը՝ լավ:—Գրությունը՝ երկայն: Առաջին պյունակը գրված է հայերն, իսկ երկրորդը՝ հայտառ տաճկերն:—Դատարկ թթերը՝ 1ա—3թ, 85թ, 86ա, 141Աա, 141Աթ, 142ա, 285ա, 309ա—318թ:—Տողերը՝ 30:—Գծումներ՝ չկան:—Գիրը՝ նույրողիր:—Զարդագրություն՝ ձեռագիրն ունի գեղեցիկ մանրանկարչություն: Կան երեք ավետարամիշմերի մեկ էջանոց մեծ նկարները (թթ. 86թ, 142թ և 285թ), ինչպես նաև չորս խորանները (թթ. 4ա, 87ա, 143ա և 286ա): Ձեռագրում կան Հիսուսի, Աստվածամոր, առաքյալների, մոգերի, սրբերի և նորէշոնակների բազմաթիվ նկարներ: Կան բազմաթիվ փոքրիկ օքկարներ Հիսուսի կյանքից: Ձեռագիրն ունի բազմաթիվ սիրուն լուսանցագրեր, բռնագրեր և զարդագրեր, ծառեր և ծաղկեմեր, բույսեր և կենաչներ, զարդիք և տաճարներ:—Գիրչը և ծաղկողը՝ էնկրուցի (Անգարա) Սահակ:—Պատվիրասուն՝ մասնակի:

Գևորգ, որդի մասնակի Սեֆերի:—Ժամանակը՝ 1728 թ:—Վայրը՝ ամենայտ:—Մանոքություն՝ ձևագիրը նվեր է ստացվել Ռումինիայից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 307թ.—Ծնորքը և ողորմութեամբ ամենասուրբ Երրորդութեան, Հօր ամենակալի, Որդոյ մարդասիրի, և Հոգում սրբ ճշմարտի. Աստուծոյ կենածանոյ և բահտանականի: Եւ բարեխօսութեամբ ամենամարդը և ամենաերանեցնալ միշան Կուսին (թ. 308ա) Մարիամու Աստուծածնի, և միշնորդութեամբ Սրբությ Հօր մերը Գրիգորի Լուսաւորչին, և ամենից սրբոց. աւարտեցաւ ի սուրբ Աւետարան Ֆիտոսի Քրիստոսի տեսան մերը, յամի ներ մարդեղութեամբ Փրկչին ՌՃԱԸ (1728 թ.—Ն. Մ.) և ըստ հայոց ՌՃՃԵ (1728 թ.—Ն. Մ.) ամսեանն փետրվարի Ս: Եւ ես յետնալս ամենեցուն տրուա և անարժան էնկուրցի Սահակ որ և պատկերաբն կոչի սա գրեաց զուրբ Աւետարան զաւս: Ով որ ընթերթու զաւետարան զայս եթէ ունիցի սղալ ինչ ներումն շնորհեցէք, ոչ թէ գիտութեամբ արարի, այլ անգիտութեամբ իմով: Այդ աղախմ զգեազ ով լ Քրիստոսի անրիծ արեամբն գնենալք հաւատարիմք ճշմարտուսէքք եղբայրը, յորժամ ընթերթու զուրբ Աւետարան զայս յիշեսչիք զիս միմիլ Հայրմերին և դուք լիշանք լիշիք ամեն ատենի Քրիստոսի և զգեազ արծանի արացէ, լավ զայս աստուածային բարբառոյ որ ասէ: Եկ ազնիւ ծառայ բարի և հայտարարիմ, մոտ որախութիւն տեսան քո, այս եղիցի եղիցի ամեն:

Եւ դարձնալ գիտեի է զպատճառն գեկութեան զուրբ աւետարան կրկին լեզուա, այսինքն հայերն և տաճկերն, ոմն բարեսկրի այսինքն մասնակի Սեփերի որդի մասնակի Գէորգը, ի բազմաց ժամանակաց ցանկալյար և խնդրէք. (թ. 308թ) յետոյ ենիս զցանկալյալն իր և կատարեցաւ առ նաև անսուտ խոստմանցն Քրիստոսի, որ ասէ, և որ խնդրէ առնու,

* Ծարունակված «Հշմիածին» ամսագրի 1984 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1985 թվականի №№ Ը—Ծ-ից, 1988 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, ԺԸ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից և Է—Ը-ից:

և որ նայել գտամ: Արդ սիրելի Խորապէ եթ կամից ընթերանով զայն աստուածակին գիրքն, յիշեսիք զելքով յիշեալք մաստոնի Գեռքը և իր ծնօղացն ողին, և Խորապէ և ազգականաց և բարեկամն ամենուն. Միով Հայոմերի և ողջոնիւ: Եւ դուք յիշեալք լիշիք առաջի ամենասուրք Երրորդորեւան՛ Հօր, և Որդույ, և Ուտոյն սրբոյ, յախտեան յախտեանից, Ամեն:

ՀԻՅԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

P. 2w.— Aceasta Carte este o suvenira lasata de Tatal meu Mardiros Karakasch care si dansu o avea dela Tatal seu, doresc ca si copii mei se o pastreze ca un semn de aducere aminte, si sesi noteze la randul lor progenitura lor in acesta carte ca se ramale ca o relique familiara Eu am fort nascut in Iasi in Decembrie 1849.—Recomand urmasilor meu Jubirea Parintilor Bunele Moravun in Societate Ajutorul celor slabii si „Onestitatea”
St. Karakasch

St. Karakasch

Bucuresti, August 1890.

թ. 2թ.-1821 մայիս:

Թ. 3ա.-1482 թիւ: 1821 լուսնաշին 2:

թ. 309ա. -Թվին ՈՒՄԾԵ-ԻԱ (1808 թ.-Ն. Մ.)
թթվական յայօց օրուոսի ամսուն ԺԵ-ԻԱ պէն
Ռուշոնքը Քարաքաջ օղլու Մաթոս պու ավետարա-
նու ը Սկրամայուսաց պատրմ Քարաքաջ օղլու Հաճի
Կարայակու աղայ իշխն Բէր Բաչւն քի պիր գիրիա-
թօննայ քարտաշըմք օքուրաց կէչմիշլէրինէ պիր
օղօրմիս օքուսուն Աստուած օղօրմի Անէնելոց լո-
րուն:

Թ. 316n.—1825 Մարտ 10-ին:

Պիտիզ օյալունց պու թարիթեն չունեռ պալուշուն
էմսիսի վար պահ բահմէք էլևին ճանենայ, նոր
ինսիս քերէզմանընայ, քուլունուգ ֆիլան ֆիլանենց,
պէճանմէ:

Թ. 317ր.—1825 Մարտը 10-ինսէ Եազու պիլմիշ-օգաստնօքի պու թարիթթէն չունթուպալու օլուու պահի բամիկը կը լւսն ճանենա; Պէճակէյի բուլունու Պէտու Քառարաշնան:

1825 մարտ 10-ին ենաց պիլմիշ օլանձ պու թարիքթէն չունեթ պայուշ օլուու պալան բամբէթ էլլեւսին ճանանայ, պէնտէջի քողովնող պալան եարաթըրդնա:

Թ. 318ր.—1822 ներկա. 15 Պօբուշան: Ես Էկի իս
լորդէն հոս ու քարթացի իս աս պիրքը Միջ.
արդիս Քարքազ: Խնմէն մալէմի օլումն...

1825 երպիսի 24-ինտէ ի Եաց:
Ես Էկիլ իմ Պուշչանէն հօս, Կարդացիլ իմ այս
թիրըս: Ավէտիսի Քարաքաշիան:

No 382

№ 332

Թերթիսը՝ 274:—Պայմանը՝ 22, յուրաքանչյուրը
12-ական թերթից, բացի ԺԵ՝ 10, Բ՝ 11, ԺԵ՝ 14: Հա-
վելվածական մի պրակ է ձևագրի սկզբում կա,

բաղկացած 10 տերթից: —Մեծությունը՝ $19 \times 14,5 \times 4,2$ սմ: —Նյութը՝ դեղնած և կեղտոտուծ բարակ դիմաց-կուն թուղթ: —Կազմը՝ կաշեպատ տախտակ, որի վրա ճշշումով ուկեգոյն զարդեր են նկարված: —Պահ-պանակները՝ սկզբուն և վերջուն մելքական սպիտակ հասարակ թուղթ: —Վիճակը՝ բավարար: —Գրությունը՝ երկայնու: —Դատարկ թղթերը՝ 2թ, 3ա, 4թ, 5ա, 6թ, 7ա, 8թ, 9ա, 10թ և 14ա: —Տողերը՝ 2թ, 3ա, 4թ, 5ա, 6թ, 7ա, 8թ, 9ա, 10թ և 14թ: —Տողերը՝ 2թ: —Գծումները՝ ճշշումով: —Գիրը՝ բոլորգիր: —Զարդագրություն՝ ձև-ռագիր ունի գեղեցիկ մանրանմարդչուրշուն: Կամ չորս ավելարանիների մեծածավակ նկարված (թթ. 14թ, 8թ, 18թ և 21աթ), ինչպես նաև բազմաթիվ խորաններ (թթ. 1թ, 2ա, 3թ, 4ա, 5թ, 6ա, 7թ, 8ա, 9թ, 10ա, 15ա, 87ա, 18թ և 21աթ): Բացի այդ ձևու-գործ կամ բազմաթիվ թղնագրեր և գրդագրեր, ինչպես նաև մելքական հրեշտակագիր (15աթ), զա-գանագիր (87ա) և կեմերանագիր (18թ): Մատուցն ունի բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր և գմրեթ-ներ, սրբեր և հրեշտակներ, ծառեր և ծաղիկներ, մարդիկ և կանայք, կապիկներ և գագաններ, լըռ-չումներ և բոյսեր: —Գիրը՝ Նկեղողու բամանա: —Դատիվիրատում՝ Քենորանցացի ումերիչ Հարություն: —Մաղկողը՝ անհայտ: —Ժամանակը՝ 1848 թ: —Վայրը՝ Կոտուանձուպոյիս (Սոտամու): —Մանրություն՝ Վաշինգտոնանակ Ֆիկին Նվարդ Մերտիմանը սույն ձևուագիրը նկիրել է Սայր Աթոռի Զեռագրատանը 1969 թ. Բուկումերերի 6-ին:

ՀՐԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 182ա.—Համբարձմանն կարդալ զսակ:

թ. 214ա.—Արթուր Խաչատրյանը պատճենաբառ է կազմուել՝ առաջին անգամ հայոց լեզվում:

թ. 273ա.—Փառք անսկիզբ ամենին և յանձնաւագ գրչու, առաջ.
Թ. 273հ.—Փառք անսկիզբ ամենին և անմահին
և անսահման էացուցին ի բոլոր էից հանցուք
ապրնաւութին և փառք Հայր և որդոյ և նոգոյն սրբյ:
Խակէ չորից աւետարանչաց խորիուր քաջարիինա-
կիմն տեսանի, իբր չորի անկիւնս արարածոց աշ-
խարին և իբր մշտակու չորս գետու յաղենական, և
այլ հնան չորից կենդանեաց ըստ տեկլեան նգէկիէլի,
այլ և նմ(թ. 273բ)ամ պիտից չորից զգալի տար-
րաց, որ շարմանեալ միտրեամբ զգալեա միջնոր-
դութեամբ, հոգի ընկալութեամբ կենդանի մարդ բա-
նական ցուցեա, ստվակու չորս աւետարանչաց
միարան հոգէկրութեամբ Հոգովս սրբով զրան աստ-
ուածայն զմարդեղութեանն յայտնեալ ծանուցին
կենդանութին ամենավն աշխարիի, ըստ այս եւ իսկ
եւ յարութին և կեանք և որ հաւատաց յիս մի մոցի
յահիտեան: Այսպէս յաւէտ կենդանութին աւետարա-
նելով աւետարան կունցաւ սուրբ գիրք պայ: Արդ
գրեցաւ սայ ի թուարերութին Հայոց ՌԴԸ (1846
թ.—Ն. Ս.) ի քաղաքն Ստամբուլ, ի դուռն Սուրբ
Նիկողայոսի, ձեռամբն անարութան և ամենայ գրչի
Նիկողոս լոկ անուամբ երիցու ի վայելումն ամեն
իրոյ: Արդ աղաչեմ զամենենեան որ հանդիպիք
սամ, յիշեցէք աղաւու ձեր զծնաւու իմ և զերախ-
տաւոր վարդապետու իմ, որ բազում երախտիք և աշ-
խատամբ ունի ի վերաց իմ: Այլն ստացող սորա յի-

շեցէք (թ. 274ա) Քենաթամնացի ոսկերիչ Յարութինն զբել տրամա զուրը աւետարան իր հոգոյն ի հապալ ընծից և ի յարդար վաստակոց, և հարբ Յովանեսի նորուն. և մարտն Հոփիսիմէն. և եղարբն Շեմրիին և միւս եղարբն Տէր Նիկողոսին, և որդոցն իրոց դեռարուսկաց Յեսազին, Յովանեսին, Շեմրիին և Մարիմամին, որ ի միում ամփ հանձնան ի Քրիստոս ի Տէր մեր ի թվին հայոց ՈՒՂ (1847 թ.—ն. Մ.) որբ Բանդիսիք սուրբ աւետարանին կարդալով կամ արիմակելով յիշեցէք ի մաքրափառ աղաւառ ձեր զվերդրեապս և Սաստուծ ողորմի ասացէք որ և ձեզ յիշողաց և մեզ յիշեցելոց առնասարակ ողորմացից Քրիստոս Սաստուծ ի միւս անգամ գալրասեան իրոյ, և նմայ փառ և երկրագութիւն ընդ Հայր և Սուրբ Հոգոյն այժմ և միշտ և յաւտինան յախտինից ամէն:

Հայր մեր որ յերկ։ Դարձեալ յիշեցէք զատացոց սուրբ աւետարանին գՔենաթամնացի ոսկերիչ Յարութինն, որ փափարանաւը ես գր(թ. 274բ)եղ զուրը աւետարան ձեռամբ եղարբն իրոյ՝ Նիկողոյացու երիցու, յիշատակ իր և կողակցին, և որդոցն և ճնադիացն իրոց, և ամենազն առու արեան մերձաւորաց իրոց կենդանեան և հանգուցելոց ի Քրիստոս Սաստուծ, և ես ի ձևու եղարբն իրոյ Նիկողոյացու քահանապին, որքան կենդանի է առ ինքն

մնասցէ, և յատոյ որդոցն իրոյ թէ քահանայ լիցի և թէ ոչ լիցի տացեն ի Սուրբ Նիկողայոս եկեղեցին, և մնասցէ անդ անջնջ յիշատակ, եթէ ոք յանդանի ծախէ կամ գրաւէ զմասն Յուղացի առցէ և զպատիմն Կայսենի աստ և ի հանդերձեկումն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 274բ.—1847:

(Վերջին պահպանակի վրա) Հոկտ. 6, 1969 Երևան:


Բնիկ իսթանպուլանայ Նուարդ Մերտինեանի կողմէ կը նուիրոի սոյն Աւետարանը Քրիստոսի. զրոս իր 1968 Ուաշինգթոնն Իսթանպուլ ճամրորդութեան ընթացքին և օրերու մէջ 22 Անպուհն գեղեցիկ դիպուած մը դէմ հանեց գրավաճառ Ֆ. Արքահանեանի գրասունէն:

Հանդիպումը Սաստուծային էր, տրուած ըլլալով Հոկտ. 5-ին Ս. Միուսնի օրհնութեան կը զուգադիպէր, և երեկ Անդրեայ եղանք այդ նուիրական հանդիպութեան:

Սոյն գրչագիր Աւետարանը սրտագին նուէր մըն է: Ս. Մերուպ Մաշուոց թանգարանին:

Նուարդ Մերտինեան

(Ծարունակելի)



**ՀԱՆԳԻՄ
Տ. ԵՂԻԾԵ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
(1902—1975)**

1975 թ. հունվարի 14-ին, 72 տարեկան հասակում, Երևանում վախճանվեց տ. Եղիծէ քին. Վարդանյանը:

Հանգույցյալը ծնվել է 1902 թ. Աշտարակի

շրջանի Դոյր գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Սամաղարի գյուղական դպրոցում:

1927 թ. քահանա է ձեռնադրվում ձեռամբ տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի և նշանակվում Դոյր գյուղի եկեղեցու հոգևոր հովով:

1945 թ. Գերագոյն հոգևոր խորհրդի կողմից որոշ ժամանակով նշանակվում է ս. Գեղարդ վանքի վանահոր պաշտոնակատար:

Այնուհետև ծառայում է Հայաստանի տարբեր եկեղեցիներում:

Իր նվիրյալ ծառայության համար 1962 թ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվում է քահանայական լանջախաչով:

Հանգույցյալի վերջին օծումը կատարվում է հունվարի 16-ին ս. Հովհաննես եկեղեցում ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի:

Հանգույցյալը եղել է հավատավոր, իր կոչման բարձրության վրա գտնվող պարտաճանաչ հոգևորական:

Հանգույցյալի մարմինը ամփոփվում է Երեվանի Շահումյանի շրջանի նոր գերեզմանատանը:

Հանգիւստ իր ուկորներին:

